



Alouatta
gigas pacific





12.02.2013

19 NOV 2010

20 JAN 2006

891.99

4-55

Վ. ԱՆԱՔԱՆ

ԵՐ


ԴԱԼԻ-ԹԱՓԱ

(ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

34455

1002
31010

891.99
4-55



1984

ՅԵՐԵՎԱՆ

79.626

Պատ. Խմբագիր

Ն. ԴԱԲԱՂՅԱՆ

ԴԱԼԻ-ԹԱՓԱ

Սըբագրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնված է արագության 1934 թ. 27 այիսի

Ատոռագրված է ապագրելու 1934 թ. հունիսի 26-ին

Բույլատրված է. Գլ. լիազոր № 257

Հրատ. № 102, տիրաժ 2000, պատվեր № 371

ՑԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՆՉՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ԴԱԼԻ-ԹԱՓԱ*)

1.

Հեղեղատի վրա ձգվող նորակառույց կամուրջն
անցնելուն պես նա ամուր քաշեց սսնձը, ձին
կանգնեցրեց և պղտոր ու մտամոլոր նայեց ճանա-
պարհի տակ հաղիվ նշմարվող հողաթմբին.

—Եստեղ սպանեցին Ռնդամալցի Սև Հայրո-
յին, ի՞նչ տղա յե՞ր...— ասաց նա մոայլ, կար-
ծես ինքն իրեն:

—Ովքե՞ր, յե՞րբ:

—Մառողերիստները, քսանմեկ թվին: Առաջ-
ներս զյուղ ե, Դարալազյաղի ամենախոշոր և
հարուստ գյուղը՝ Մալիշկան, —սկսեց նա ծխա-
խոտի տուփը բացելով, —ուղիղ տասը տարի
առաջ Յալոնի հրոսակախմբերն անսպասելի կեր-

*) Յես գիտմամբ վերցրել եմ մեր փոքր, աղքատ և նոր կազ-
մակերտված կոլխոզներից մեկը, նըա որինակով ցույց տալու հա-
մար, վոր յեթե գործը ճիշտ է կազմակերպված, արտադրական հա-
սարակ միջոցների պարզ միացումն արդեն ինքնին մեծ եֆեկտ է
տալիս:

պով վրա տվին և ընկճեցին մեր ձախ թելլ։ Մերոնք յետ նահանջեցին, իսկ մենք մի քանի որով մնացինք գյուղում, յերամից ուշացած կռունկների նման, ու թագնվեցինք տներում։ Արնախում մի կուլակ կա եստեղ, շատերի ոջախն և հանգըրել, — սրիկան մատնեց։ Մեզ հրացանի կոթերով դուրս քաշեցին թագստանոցներից ու առաջ արին։ Հենց այստեղ թնդանոթի արկը տրաքեց։ Մեր կավալերիան աջ թերից, գետի հովտով, սկսեց արշավել սրամերկ։ Դաշնակները նահանջելուց առաջ մեղ վոտքի տակ տվին։ Ուժեղ, աժդահա կոմունար եր Սև Հայրոն, հինգ

նիկների կոնֆերանսում արտասանած էր ճառում բնել Ստավրի տուում եր.

«Յետ խոսում եմ վոչ մ'այն գարգացման և մեքենատրակտորային բազա ունեցող կոլտնտեսականների, այլև նախնական կուտանտությունների մասին, վրոնք գտնվում են կոլտնտեսական շարժման այսպես առաջ՝ մանուքակտորային շրջանում և հենցում են զյուղացիական ինվենտարի վրա։ Յետ նկատի ունեց նախնական այս կոլտնտեսությունները, վրոնք հիմնված են այժմ համատարած կոլեկտիվացման շրջաններում և, փառնք պարզապես հենցում են զյուղացիական արտադրական միջոցների հասարակ գումարման վրա։ Սրտաքուստ այդ կոլտնտեսությունները կարծես թե իրենց տեխնիկայով չեն տարբերվում մանր զյուղացիական անտեսություններից։ Մինչդեռ զյուղացիական գործենների պարզ գումարումը կոլտնտեսությունների ներսում այնպիսի եֆեկտ տվեց, վորի մասին չեն ել յերազել մեր պարտիկ աշխատավորները («Ենինիզմի հարցեր», եջ 642):

Դրա կոնկրետ որինակը տալիս և Դարլագյազի Մալշկա գյուղի կոլոնոցը, վորին նվիրված են այս տպավորությունները։

Վ.

հոգով հարվածում եյին նրան հրացանի կոթերով։ Յերկրորդը արկը պայմելուց հետո նրանք փըրփած կապկալեցին Հայրոյին։ Յեկ մի ահազին քար վեր բարձրացավ ու թափով ընկալ ցած... Նրա ուղեղի կտորները զիպան մառզերիստի բաժանկաներին ու խմորի նման կպան...։ Եստեղ թաղեցինք։ Ու վրեժով լցված, Յավոնի հրոսակներին, մի շնչով քշեցինք մինչև Զանգեզուր։ Բայց մնաց Մալշկեցի կուլակը, նա դեռ մնում է, գեռ մարսում ե...»

Ընկերոջս աչքերը վառվում եյին վրեժից ու բարկությունից։ Նա շպրտեց ծխախոսի մնացորդը, մտրակեց ձին և մենք մեր հետևում թողեցինք վայրի փշերով շրջապատված թումբը՝ մընդպամալցի Յեկ Հայրոյի գերեզմանը։

— Գոնե կոլխոզ չունեն, աննամումները, խըլեմ, մատներով պոկեմ, ուղղակի հափշտակեմ եղ գաղանի այգին տամ կոլխոզին, սիրտս հովանա, — գառնացած մընմընթաց ընկերու յերկար լուսթյունից հետո, յերբ մենք լերկ սարալանջն անցանք ու ծռվելով մտանք կանաչ այգիների աշխարհու։

Այդ մի տարի առաջ եր, 1930 թվի աշնանք։

2.

Փայուր բացել ե իր կուրծքը և այնտեղից դուրս կարկաչյունով հորդում են ջրերը, Մըն-

րը զուլալ, սառնորակ և այնքան հորդ, այնքան առատ, վոր ներքեսում գիշեր-ցերեկ աշխատուս են ջրաղացները:

—Մալիշկին ես ջրովս ա Մալիշկա, մի մտիկ՝ ներքն դրախտան բաղ ա, դրախտան բաղ:

Եշերի քարավանը քարքարոս կածանովի ջնում ե ցած: Կոլտնտեսական կանանց բրիգագիրը տղամարդու պես թէ ե տալիս ջվալներին, իշեցնում ցած, ապա փոռում են կարպետները հոսանքի առաջ ու տոպրակներով ցորենը շուռ տալիս: Զուլալ լեռնային աղբյուրը քշում տանում ե աղբը, թեփը, մրիկը, այն ինչ վոր կարողացել ե ազատիկը Վարոննեմի սերմադուչի պողպատյա մաղից: Ու մնում ե կարմիր ցորեն՝ նոան հատիկների նման:

Առաջին բերքն ե, կոլեկտիվ աշխատանքի առաջին արդյունքը: Արդյոք սա յել մինչ այժմյան հացերի պես «բոյ ե տալու մի գաղ», թե...ով գիտի, սատանի բան ե:

—Կուտ կանի, ջանրմ, թամուզ թոնդիրը կրթափի:

—Տո կոլխոզի հացը կուտի՞:

Յեվ նրանք՝ Թագոնները, Անուշները, վորոնք դեռ յերեկ իրար մագերն եյին քաշում մի բուռ հավի կուտի համար, «մաշինից հետո ջրով զըտագծ» ցորենը ուրախ կատակով լցնում են ջվալ-

ները, բարձում եշերին, և քարավանը ձամբա յենկնում դեպի ջրաղացը:

—Ո՞հ, ո՞հ, հաց հո չի, կաթնահունց եմ ուտեցնելու, կաթնահունց, պապիրոսի թղթի պես քարակ լավաշ:

Յեվ բրիգագիր Շողիկն այրվող այտերը զովացնում ե ջինջ ջրով, մեզ տեսնելով շփոթվում ե, ապա հետպհետե համարձակություն առնելով հարցնում ե.

—Ո՞ւմ եք ուզում:

—Չեզ, ձեր կոլխոզի նախագահին:

Նա մատը մեկնում ե ժայռի գլխին թառած դեղերին:

—Կալ են անում, եթանք:

3.

Բարեկամական իրոնիայով ե պատմում վաղվա կոլտնտեսականը Մալիշկայի կոլտնտեսության մասին:

—Զանըմ, զանտ չկար, մե յեզ ունեյին, մեկ ել տասնյերեք եշ՝ առանց փալանի:

Մարդիկ կարծես հեռավոր անցյալի մասին են խոսում: Մի առողջ կատակով նրանք «ձեռ են առնում» իրենց յերեկվա գործը:

Դեռ գարնանը, յերբ ձառերից հետո խոփը պիտի հողը մտներ, պարզվեց, վոր խոփ չկա:

Զկա սերմ, շղթա, թոկ, չկա կթան՝ կորանտեռականներին մնումով հասցնելու համար: Անհկդուտ դարձած այն արտահայտությունը, թե 16 տնով մի յեղ ունեցինք, 13 անփական եշ՝ իրականություն ե, դառն իրականություն Մալիշկայի կոլտնտեռության համար: Կարիքից քշված և «լութ պրոլետարի» անուն վաստակած արդ մարդիկ ուղղակի վոչնչից սկսեցին: Վոչ մի հույս մեքենայի ոգնությունից այստեղ տիրապետողը քարն ե, հրաբխաքարը: Վոր դարեր առաջ դուրս ե ժայթքել Դալի-Թափայից ու իր կարծրության տակ ճզմել արդավանով հովհարը: Քարակույտերի արանքով ճգվում ե նեղ, քարքարոս շպիղը, վոր մատչելի յե միայն եշի և ջորաւ մանը ու ճկուն վոտներին: Այստեղ միակ տրանսպորտն ավանակն ե, իսկ Մալիշկայի կոլտնտեռության ամբողջ «տրանսպորտը» մեզ ճանոթ տասն յերեք եշն եր՝ առանց փալանի:

Նրանք չհուսահատվեցին:

Մե բան մենք առանք, մե բան պարոք արինք, մե բան ել կառավարությունը տվեց (շեն մա ինքո), մեկ յեղը քսանըմեկ շինեցինք ու մարտի վերջին ենենց մի թափով հանով դուրս յելանք, վոր գեղը թամաշի դուրս յեկավ «չփախներիս»:

Դալի-Թափան տիրաբար իշխում ե Վայոց

ձորին: Նրա շաքարի գլխի նման կլոր ու վողորկ գաղաթը զրսից պատել ե հաղարամյա հրաբխափոշին, ապա զարեր շարունակ փտել ե լեռնացին սեզը, թոփալախոտը և սեահողի մի ստվար շերտ ե զոյացել: Հողը մասցել ե կուսական: Նախով չի աեսել վոչ Վայոց ձորի իշխանների ժամանակ, վորոնք մորակի տակ մարդկային «հոտեր» են աշխատանքի հանել ներքեւ հովտում, վոչ ել սյունյաց իշխանների ժամանակ, վորոնց հոտերը հստի-Սույից ձգվել են մինչև Դալի-Թափա:

Իշխանական ուժն անդոր եր այստեղ հասնելու, այստեղ հասավ Մալիշկայի «չփախների» խումբը և իիկախորեն վրա տվեց Դալի-Թափայի լանջերին, յերբ ձյունն արագ նահանջում եր գեպի բարձունքներն ու ժամանակավորակեամբանում հրաբխի ճագարածն յերախում:

Կոլտնտեռային խոփը կուսական հողի կուրծքը մտավ թափով, և կոլեկտիվ կյանքի յերգը թնդաց ամայի լեռան լանջերին, զիլ ու հաղթական:

Լսնջը սեացավ. բերրի սեահողն իր զրկում խնամքով պահեց յերեք հարյուր փութ հատիկ: Ապագա կոլտնտեռականը հիացավ և սրանց, շատ սրտանց ձրի առաջարկեց իր հողերը: Շատերը բարեկամաբար հանձնեցին իրենց հողերի:

այն մասը, վոր այս տարի անկարող եյին ոդաս-
դործել:

—Թող վարեն, մարդկանց հալալ ա:

Յեկ փոքրիկ այս կոլեկտիվը, ծայր աստիճան
առքատների այդ խումբը, ուր միջակն իր զույգ
յեղից զրկվելու ահից չեր մտնում, ցանեց յե-
րեք անդամ ավելի, քան մի այդքան միջակ գյու-
ղացիներն իրենց անհատական տնտեսության մեջ:

Կոլտնտեսականներ՝ Արամը, Առատուրը, լու-
սընիա յերեկոյին կոլտնտեսության կալում մեր
շրջիկ խմբագրությանն իրենց բերկրանքը հայ-
տնեցին անպահույժ խոսքերով.

— Խերումնեկ ել տարին՝ մե խատիկ դան
չեմ քցել խողը, ես տարի ամեն մեկիս տաս-
նութ փութ ցանք ի խասնելի: Ետ յուր ա....

Կղա, միջակը հիմի կղա, միջակին ել ան-
ցանք, կղան, հաղթողի արտահայտությունը
գեմքին ասում ե չամոն, կոլտնտեսության նա-
խագահը:

Յեկ գալիս են:

Յերբ բերը, կուսական հողն արտասովոր
ուժով զբսեփորեց իր բերքը, յերբ կանաչ արտե-
րը մեղմ զեփյուսից «հերանց գնացին» Դալի-Թա-
փայի լանջերին, նրանք յիկան խմբերով —
կոլտնտեսությունը կրկնապատկվեց: Առաջին
միջակը կոլտնտեսություն մտավ:

Դալի-Թափային հաղթելուց հետո, դա կոլ-
տնտեսության յերկրորդ խոշոր հաղթանակն եր-
4.

Պատմական Սյունիքում ե նա, անմատչելի,
կտրված աշխարհից: Այսոր, հոկտեմբերի սկզբնե-
րին ել գեռ նրա լանջերին կանոնավոր շարքե-
րով բարձրանում են խոտի ու արտի «փենջակ-
ները», իսկ արևազուրկ մի անկյունում գուք
գեռ կանաչ արտեր կտեմնեք, վորոնք մերկ ու
ուշացած սվավում են աշնանային ցուրտ քամու
առաջ: Փոքրիկ այն կոլեկտիվը, վոր գարնանը
խիզախորեն սևացրեց ամբողջ լանջը, այսոր «չի
հասցնում»: Ներքեւ, հովտում մշակում ե նա քա-
ռասուն կտոր խաղողի այգի: Գետափնյա ծխա-
խոտն ու նոր կառուցված չորանոցը մարդկային
ուժի իրենց բաժինն են պահանջում, իսկ արտե-
րը կծղում են Դալի-Թափայի կրծքին ու սպա-
սում են մանդաղի: Կոլեկտիվը արդեն «չի կարո-
ղանում տիրապետել», ինչպես կոմքիջի քար-
տուղար կարոն ե ասում: Իսկ կոլեկտիվի 8 ա-
վանակից բաղկացած տրանսպորտը հաղիվ որական
80 խուրձ ե տուն բերում:

—Մեր ուժերով յեթե ամբողջ ձմեռը կրենք,
մինչև մարտի վերջը հաղիվ վերջանա: Չոր բերք
կա, զո՞ւ տասչոլս հազար խուրձ....

Ապագա կոլտնտեսականը, վոր արդեն մի ամբողջ ամառ վերմակի տակ թաքուն խորհրդակցել ե կնողա հետ, մի բերկրալի գաղտնիք ունի իր սրտում: Այդ յերեսում ե թեկուզ նըանից, վոր նա, դեղուկ Անուշավանը, զիշերը, յերբ գյուղը խորը քնած ե, մանգաղը խրում ե գոտիկը, եշն առաջ անում և գաղտագողի, անշշուկ, եշին կամացուկ բգելով, դուրս գալիս գյուղից ու խարխափելով, քարերին կպչելով նեղ շավղով քարում դեպի Դալի-Թափա:

Առաջին անգամ չե, վոր կոլտնտեսականները վաղորդյան ցրտին, յերբ տեղ են համանում ու մանգաղները գոտիկից հանում, ապշում են զարմանքից: Արտը հնձած ե ու խուրձերը շարված են մեծ խնամքով:

Ապագա կոլտնտեսական Անուշավանը բոլորովին կարիք չունի հայտնելու, վոր ինքն ե հնձել: Նա դեռ աղամամութին խրձերը բարձում ե եշին, կտրում տան և մեկ վերստ, իջնում գյուղ. քեռը կամացուկ իջեցնում կոլտնտեսության կալում և գողեգող, լուսնի լույսից պատսպարվելով գնում իր տուն: Հաստատ կարելի յե պընդել, վոր այդ բողեյին նրա արեառ դեմքն այրվում ե ներքին հուզմունքից: Կարելի յե պնդել նույնպես, վոր կինն այդ գիշեր չի քնել և գարբասի թեթև շրջակոցը լսելուն պես դուռն ան-

ձայն կիսաբաց ե արել ու կամացուկ շշնջացել, «պընդա՞ար, մարդ չտեսա՞վ...»:

Անուշավաններն այստեղ յեզակի չեն: Թաքուն այն համակրանքը, վոր առաջացել եր նրանց մեջ, ուժգնությամբ աճեց, յերբ յեկեղեցու կամարների տակ հայկական բեմի լավագույն ուժերը՝ Մանվելյանը, Հասմիկը, Արուս Վոսկանյանը և ուրիշները ճշագի աղոտ լուսով հուզիչ տեսաբաններ ասվին կոլտնտեսական կյանքից, գեղարվեստական ուժեղ շտրիխներով վեր հանեցին կոլտնտեսության համար մղվող պայքարի վեհությունը:

Հասարակական ժողովը մի մարդու նման վորշեց բարեկամական ձեռք մեկնել կոլտնտեսությանը: Կամավոր հնձվորների խմբերը, կոյերիտական վողջ բջիջը մի քանի որ ե մըջնաշան աշխատանքի յեն կպիկ Դալի-Թափայի լանջերին: Տրանսպորտը կրկնապատկված ե: Իսկ գեղերը բարձրանում են ու բարձրանում համայնական կալի յեզրերին, մեջքները հենած քանդված տանքեկորներին:

*
* *

Լիալուսինը պառնկը հանում ե հանդիպակաց լեռան լանջից և լուսավորում ե արեվախաշ մազոտ դեմքերը: Նրանց արտեանունքներին, թավ

բելսերին նստել ե կալի փոշին, մղմեղը կանանց
ըրիգագլը վորոշել ե կալսել մինչև ուշ զիշերը: Մի
հակա կալ ե այդ: Կոլտնտեսության նախագահ
Համոյի ասելով՝ նրանք «ռացիոնալ են անում»,
զյուղացին 200 խուրձ ե կալսում, իսկ նրանք՝
հազար: Դեզի տակ, կալի յեղին, աշխույժ շրիկ-
շվակոցով աշխատում ե քամհար մեքենան:

— Տղերք ջան, ես գիշել մթերման փայը լուացրեք հա, — խրախուսում ե բրիգադիքն ու յեղանի վրա հենվելով լսում մեր խոսակցությունը:

Մեզ համար դժվար եր այդտեղ հավաքված խմբի մեջ վորոշել կոլտնտեսականներին։ Պարզվեց, վոր կոլտնտեսության մասին ամենից վորգեգործած պատմողները վոչ կոլտնտեսականներն են։ Նույնիսկ թավ յերեսով ու բարի գեմքով Մուկուչ բիձեն անհարմար զգաց վոր ասի ինքը կոլտնտեսական չե.

—Բա ինչ եմ, վոր կոլխող չեմ, բա վոր յես
կոլխող չեմ՝ ես դեզն ով ա գրել:

Յեկ իսկապես, մեր թիկունքում բարձրացող
ամենի դեզը զբել ե, վոչ-կոլտնտեսական Մու-
կուշ բիձեն: Ապա գաղտնիքը բացվելուց հետո,
նա շփոթված ասում ե.

Ես ել մերն ի, ջանը մ. քոմակ անենք ու-
ժեղանա, վոր եքուց մենք ել ենք գայոււ

Իսկ մի ուրիշ բիծա իրենց աջակցությունը
կոլտնտեսությանն այսպես է հիմնավորում.

—Աթաղան-ըաբագան ասված ե, զոր խարեցանին պետք առնես: Վիզս կտրես՝ աննամուս խարեանին մե ծեղ չեմ տա, զոր աշքի լուսը ճխտի, համա ղեյրաթովնամուսով խարեանին խորիս եկ չեմ խնայի:

Այս, Մալիշկայի կողեկտիվը նԱՄՈՒՍՈՎ հարեւան ե, ՂԵՅՐԱԹՈՎ ե աշխատում, մեղվի նման ջոկում ե անգործ բուերին, Այդ ե, վոր գուր ե գալիս վաղքա կուտածեական Մուկուչ բիձին:

Ուշ գիշեր ե. հոգնածությունից մեր մար-
անդամները տնքում են: Վոտքով ճամբորգե-
նա անսովոր ինտիլիգենտ ընկերս արդեն ննջում
կամերի միայար ու մեղմ ճռչյունի տակ:

Քայլում ենք զյուղի ծուռ ու մուռ փողոց-
ներով և մտնում վոչխարի աղբահոտով հազեցած
մի բակ, ուր կուեկտիվի հովվի գեռատի կինը բաց-
յերկնքի տակ մեզ համար անկողին ե փռում:

Մինչ մենք հանվում ենք, դիմացի կտուբից
մի գլուխ ե բարձրանում ու հարցնում.

— Համո, ո՞ւմ իսետ եմ եթալու, ասա, վոր
իմաց տամ:

«Կոլեկտիվի ճարեգաններից» եւ, պատրաստ-
դակ-թափառ-2 ։ — ՕԾՊԱ

վում ե գիշերը Դալի-Թափայից խուրձ տեղափոխելու:

Լուսինը թեքվում ե դեպի Յեղինի լեռները, քունը հաղթում ե մեզ, իսկ հեռվից, կարծես յերազում լսվում ե քամնար մեքենայի ախորժալուր շմկակոցը...»

5.

Դայլախլվից վերև, Դալի-Թափայի արևմբայն յերեսին մի փոքրիկ արահետ կա, քարե խողովակով մի աղբյուր, վոր մի ժամանակ ջուր ե տվել ներքե ցրված թրքական փոքրիկ գյուղի բնակիչներին:

Մի սև ձեռք դյուղն ավերել ե հիմնովին: Մառակերիստական բռնակալության այդ կենդանի վկաների կողքովս անցնելով և լեռան գլուխը դուրս գալով՝ ձեր առաջ բայցում ե Դարալազագի չոր, դորշ ու քարքարոտ բնության ուժեղ կոնտրաստը: Այստեղ, ներքեվում, ձգվում են կաղնուր անտառը, վայրի սալորենու թփերը մինչև Սյունյաց Վասակ իշխանի գերեզմանը—Ղուշի, իսկ դեպի հյուսիսը՝ Շամշադինի և ապա Բասարդէշարի ուղղությամբ ձգվում ե կանաչ լեռների աշխարհը, թափայա սարահարթերը, ուր այստեղայնտեղ քամուց պատսպարված «չոքակներում» տեղափորվել են Հեր-Հերի, Կարմրաշենի, Մալիշկայի կոլտնտեսությունների վրանախմբերը:

Մալիշկայի կոլտնտեսությունը, վոր գարնանը վոչ մի չորքոտանի չուներ, այժմ յերկու հարյուր հասունանոց մի հոտ ունի:

Յերբ արևածագին կայտառ գառների հոտը փովում ե կանաչ բլրի կրծքին և ցողախառն դալար կանաչը խժում ախորժակով, հեր-հերցին հեռվից մատով ցույց ե տալիս.

— Մալիշկի կոլխոզի գառն ա, ինչ ապրանք են պահել շան վորդիքը, վոնց վոր յուղամանից հանած:

Յեկ իսկապես՝ «յուղամանից հանած են» Մալիշկայի կոլեկտիվի գառները:

Վոչ-կոլտնտեսական գյուղացիներն ամենայն անկեղծությամբ հայտարարեցին մեզ, վոր «կոլխոզի գառները վոչխարից չեն ջոկվում», «կոլխոզի պես գառ ու վոչխար պահող չկա», «կոլխոզի վոչխարի ջանում վոր յերկու փութ յեղ չլինի, բեխերս կկտրեմ»:

Ինձ համար չափազանց հեղինակավոր ե մալիշկեցի Գեվո բիձի կարծիքը: Նա ամբողջ կես դար լեռներումն ե ապրել անսառունների մեջ:

— Քսանութ տարի չոբանություն եմ արել, վոչխար եմ պահել վոնց վոր աչքիս լիսը, ամակոլխոզի վոչխարի պես հլա վոչխար չեմ տեսել,— հայտարարեց նա կոլեկտիվի կալում, գյուղացիների ներկայությամբ: Նրանք՝ վոչ-կոլտնտեսա-

կանները, զանազան նշաններով ու բացականչություններով հաստատեցին Գեվո բիձի առածը:

Են որը սարումն եյի—շարունակեց Գեվո բիձեն, —չորան վախտվա պես թինկը տվի մի քարի ու մտիկ եմ անում: Կոլխոզի գառներից մին առաջի վոտները դրել ա քարին, ուզում ա անց կենա, ամա դմակը հետեկց չի գալի, ենքան վոր մենձ ա:

Այս, գառների դմակը մեծ է, շատ մեծ: Դա քիչ բան չե: Դա ցույց ե աալիս, վոր կոլեկտիվի հովիկ Արամայիսը, թուխ դեմքով ու սե, կրակոտ աչքերով մի յերիտասարդ, գառը հանդ ե տարել դեռ աղամամութին: Դա ցույց ե տալիս, վոր կոլեկտիվի վոչխարը կշացել ե շաղու ու հյութառատ կանաչով դեռ արեածագից շատ առաջ: Դրա համար հովիկ Արամայիսը պրեմյայե ստացել, սակայն ինչպես յերեսում ե՝ Արամայիսի ըկին լավ չեն նայում սարում: Կոլտնտեսական իսկուհի տատը «ինսայողական ոեժիմ» ե մոցրել վրաններում և յերեսն կաթի տեղ թան տվել յերիտասարդ հովիկն, վորպեսզի յուղ ու պանիր հասցնի արտերում քրտինք թափող կոլտնտեսականներին: Սկանդալ ե բացվում: Հովիկ Արամայիսը շատ ե վրդովվում, վոր համագումարի վորոշումը տատը չի կատարում, թե՝ «շատ ու լավ աշխատողին շատ պիտի ուտեցնել», ու խոռված

գյուղ ե գնում:

Նրան փոխարինող Զավկոյենց Արսենն ավելի չաղացրեց վոչխարը:

Յեվ այժմ Մալիշկայի կոլեկտիվի հոտը՝ վոնց վոր գյուղացիներն են ասում յուղամանից հանած պապղում ե ու ամեն առավոտ արեածագին տրանզի տալիս, խաղում լեռնային զեփյուռի հետ, թավշյա գորգերի վրա ու կեսորին յերկար շարանով ձգվում դեպի բինան, ժապավեն քաշում բլրի մուգ կանաչագույն պեյզաժի վրա:

6.

Հեռավոր այդ անկյունում նահապետական հարաբերությունները դեռևս մնում եյին կանգուն և իշխում եր սովորույթի ուժը: Խորհուրդների ձեռքն այստեղ հեղաշրջում ե ամեն ինչ արտասովոր ուժով: Կոլեկտիվի տնտեսական գործունեյությունը Մալիշկայում զարգացրեց առաջցող նոր հարաբերությունների սաղմը: Այդ նոր հարաբերություններից առաջինը, վոր անմիջապես աչքի յե խփում, Դարալազյազի գեղջկունու փաստական ազատազրությունն ե կոլտնտեսական կյանքի կազմակերպման միջոցով: Ազատազրությունը ընտանեկան ծանր հոգսից, տնտեսական կախումից: Նա՝ կոլտնտեսական Հմայակի կինը՝ Հայկանուշը, մի թեթև վեճի ժամանակ ան-

միջապես հանում ե աշխարքույկը, դնում թախտի վրա և հաղթական ու արհամարական ժպտով հարցնում.

— Մի մեյզան յեկ տեսնենք, ում մերը տղա կըերի:

Այս աշխարքույկն այժմ Մալիշկայի կոլտընտեսուհու հզոր զենքն ե, այդ պատճառով ել նրա աշխորերը հաճախ ավելի շատ են: Նա անկախ ե ու համարձակ:

Նրա ձեռքերն ամենից շատ կաշկանդում եյին յերեխաները: Նա գլխիկոր տանումեր ամեն նախատինք յերեխայի սիրուն: Նոր բացված մոռւրն այդ կաշկանդանքը քանդեց: Հենց կոլտնտեսական հմայակի կինը, բավական գիտակից մի գեղջկուհի, առաջին որերը կուլակային պրովակացիայի պղկեցության տակ ինքն ել տատանվեց. «Ի՞՞ մսուր, վոր տամ՝ կվերադարձնե՞ն»; Յեվ յերը Յերեվանից յեկած «մորաքույրն» սկսեց յերեխաներին սիրուն խաղեր սովորեցնել, յերը հիմնովին նորոգման յենթարկվեցին ցնցուիապատ յերեխաներն արտաքնապես, յերը լի ու լի ուտելուց և ցատկուելուց հետո ամեն յերեկո նրանք վազեցին դաշտից նոր յեկած մոր գիրկը, կոլտնտեսուհին առաջին անգամ մի ծանր բեռից իրեն ազատված զգաց, և նրա աշխարքույկում աշխորերն սկսեցին աճել արագությամբ:

Երևան
Այդ անչափ թեթևացրեց Մալիշկեցի կոլտնտեսական տղամարդու բեռն ևս: Տնտեսության այդ նոր ձևի, այդ նոր հարաբերությունների առաջացման շնորհիվ միայն կարող եյին կոմյերիտականներ Խափայելը, Աբրահամը, Ասատուրը, Գաբրելն իրենց ընտանիքը թողնել կոլեկտիվի «վզին» ու բարձր տրամադրությամբ գնալ պղնձի Փրոնտը: Միայն այն համոզմունքը, վոր իր ընտանիքն ապահովված ե հսկա այդ ընտանիքում, կարող ե կոլտնտեսական Խափայելին դրդել այսպիսի նամակ գրելու:

«Բարեագիր Ալլահվերդու պղնձահանքերեց, լեռներից ու անտառներից դեպի Դարալազյաղ գյուղ, Մալիշկա Հմայակ Սարգսյանին ու բոլոր կոլխողի անդամներին ու գյուղի ակտիվին:

Յեթե հարցնելի լինեք մեղանից, Հմայակ ջան, այդ մասին ձեզ կպատասխանեմ, քեֆս տեղը դըի առնելով թէտի յերեսը, վոր մենք շատ լավ ենք: Ամենից առաջ, վոր այստեղ չափազանց եժանություն ե, մեզ տրվում ե բոլոր հարմարությունները, որական տալիս են մեկ կիլո հաց, վորն արժե 20 կոպեկ, մեկ կիլո շաքար—վոր արժե 70 կոպեկ, յերկու դան թեյում ենք, թեյի բա-

Ժակն արժե 5 կոպեկ: Հանքում աշխատելու ժամանակ մեզ տալիս են մածուն, թեյ և այն, յուրաքանչյուրիս մեկ գույղ կոչիկ մի շալվար, մի պենջակ, մի սապոն և այն: Զմերուկի կիլոն այստեղ արժե 20 կոպեկ:

Այժմ գրիր կոլխոզի կյանքից, աշխատանքից, թերությունից, աճումից, աշխատանքի հաշվառումից, Նավլարի հնձից և մնացած ամեն ինչի մասին: Գրիր հացամթերման հաջողությունից:

Մենի հասել ենի պղնձի մոռնիք
Աշխատում ենի ամեն վոյ
Լուացնել 60 տոնն պղինձը
Վոր տրված է մեզ պլան
Մտածում ենի աշխատում
Կգերակատարենի անպատճառ:

Յեկողներ թե վոր կլինեն, հմայակ ջան,
ասա գան շախտերումը շատ հետաքրքիր ա:
Մեր տանեցոց լավ մտիկ արեք, տաեք դոչաղ
աշխատեն:

Իմ հացեն՝ Ալահվերդի, Շամլուղի
հանքեր»:

Վորքան անպահույց, վորքան պրիմիսիվ,
սակայն և վորքան ամուր ու խոր հավատով և
ասված:

Ակամայից հիշում ես պանդխտականների սրտամորմոք ու լալկան նամակները, նավթային կապիտալի ձիրաններում հոշոտվող գարալագյաղցի Աբեների նամակնները:

7.

Վերջացնենք: Զիերը հեծնենք և կոլտնտեսականներին «մուաք բարի, հաջողություն» ասելով դուրս գանք գյուղից ու մտնենք Գորիս-Քեշշայրներ նորակառույց շուեն, վոր յերկարում և դուգահեռ ձգվող բարդիների միջով:

Սքանչելի ծառուղի, վազորդյան զով ող և այգիներից յեկող թարմ կանաչի բուրմունք: Սյահիներով ծածկված բլբակի թեք լանջին կանոնավոր շարքերով տերրասներն են, կոլտնտեսական այգու տերրասները, վորոնց վրա ծանրացել են սև խաղողի վողկույզները, մատղաշ ծառերի գեղձով ու սերկեիլով բեռնավորված ճյուղերը: Սաղարթախիտ ծառերի մուգ-կանաչագույն ֆոնի վրա լիտուատ, կարմիր թուշերով ժապտում և հասունացած գեղձը:

Մեր տեսած հորդառատ աղբյուրի ջրերը բազմաթիվ կանաչներով վողողում են սքանչելի այդ հովիտը, կանաչ այգիների այդ աշխարհում կենսարար զուղալ ջրերով և զվարթ աճում ե կոլտնտեսական պտուղը, գարսվում կողովների մեջ

ու փոխադրվում գյուղի, Այգինկոռպալի չորանոցներում կալիֆորնիայի սիստեմով չորացվելու համար:

Սակայն Դարալազյազի աչքը, հարուստ ու պտղավետ այդ հովիար, դարանակալ թշնամու սև թաթի հետքն ունի իր վրա: Նրան հաջողվել է գյուղացու, թեկուղ և նոր կոլտնտեսական դարձած գյուղացու կոնսերվատիդն ոգտագործել և գյուղից հետ ուղարկել այգիները սրսկելու համար յեկած բրիդագները: Թփերը դրկվելով փրկարար ծծումքից ու արջասպից, զոհ են գնացել «չոռին», և դալկացել է վոզկույզը: Թփի տակ: Նա՝ մնդամալցի Սև Հայրոյի դահճը, խավար մի գիշեր, մյուս կոլտակների գլուխն անցած, կտրել հոշոտել ե կոլտնտեսական մի քանի այգու ծառերը, խաղողի թփերը:

Մնդամալցի Սև Հայրոյի դահճի և իր ընկերների թաթը կարգած ե, իսկ նրանց այգիները հանձնված են կոլտնտեսությանը:

Նրանք Մալիշկայի կոլտնտեսականներն այս տարի լավ դաս առան:

— Ախմախացանք, ջանըմ, ախմախացանք, յեկող տարի յեկեք տեսեք ամիրկանսկի ենք մշակում, թե՞ չե:

Այս, կոլտնտեսությունը դասն փորձից հե-

տո «ամիրկանսկի» այգեգործության պլաններ ե մտմտում:

* *

Մենք մտրակում ենք ձիերն ու սլանում ասղարթախիա ծառուղիներով:

Հեռվում յերեսում ե հեղեղատի վրա ընկած նորակառույց կամուրջը, ապա հետզհետե նշմարվում և փշերով ծածկված թումբը:

Մեր ձիերը կանգ առան ոնդամալցի Սև Հայրոյի գերեզմանի մոտ:

Առաջին այցից ուղիղ մեկ տարի յե անցել: Նույն չորացած փշերը, նույն փոքրիկ ցըրպած քարակույտը:

— Վրեժն առնված ե, Հայրու, — գոչեցի յես:

— Կրկնակի, այս զիշեր կոմունարները վոչընչացրին Գնիշիկցի Պարույրի բանդան. — Խրոխտավելացրեց ընկերու և մտրակեց ձին:

Յես հետեւիցի նըան:

Մեր տեսողությունից սկսեց ծածկվել այգիների աշխարհի մուգ-կանաչագույն պանուաման:

Դարալազյազ,
Հոկտեմբերի 1.

1931 թ.

ԴԱՐԱՎՈՐ ԱՆԱՊԱՏԸ—ՍՔԱՆՉԵԼԻ
ՄԻ ԱՅԻՒ

Դ Ա Ր Ա Վ Ո Ր Ա Ն Ա Պ Ա Տ Ը -Ս Ք Ա Ն Չ Ե Լ Ի
Մ Ի Ա Յ Գ Ի

ՍԿՍԵՆՔ ՆՈՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ

«Յերե նոյ նահապետը հարուրյուն տռներ յեվ մրաներ հայկական գյուղը, ապա նա ի սրեւ ընորհակալուրյուն կհայտներ հայ ժողովրդին, վոր իր սիրած կովտուրան՝ խաղողը՝ մնացել և այնպես, ինչպես ինքը՝ նոյն եր հիմնել, յեվ չի տղափառվեն նրա մշակուրյան նախնադարյան յեղանակը»:

Այսպիսի մի «առած» և պտտում այժմ մեր մասնագետների շրջանում։ Յենթագրում են, վոր հեղինակը Տմբլաչի Խաչանն ե—գյուղատնտես կ. կ. Մելիք-Շահնազարյանը։ Իր այդ առածից նա հրաժարվելու վոչ մի միտք չունի։ Իրոք պլողերն այդ բնագավառում նույնչափ փոքր ե և հազիվ նկատելի։

Եւտ նայենք դարերի խորքը։ Դեռ յերկու հազար տարի առաջ այստեղից անցել ե հույն Քսենոֆոնը և իր գրքում չի մոռացել հիշատակելու, վոր հողաշեն բներում ապրող այդ մարդիկը այդիներ ունեն և պատրաստում են գինի։ Համարյա ճիշտ այն յեղանակներով, ինչ այսորված փարաքարցի մենատնտեսը։

Հայկական հնագույն մայրաքաղաք Արտաշատի բեկորները կան: Կա նաև Տրդատ թագավորի ապարանքի հիմքը: Վաղարատ զնալիս ծովեցեք ձախ և նորակառույց ծառուղին ձեզ կտանի այն բլուրը, ուր 35 տարի յե պեղումներ են կատարվում: Պեղում են մարդիկ և իջնում ստորերկրյա նկուղները: Արքայական մառաններն են, ուր պահվել ե գինին: Մերկ վոանների տակից խաղողի հյութը հոսել է ցած՝ քարե խողովակներով: Պատմաբանը ձեզ կասի, վոր Քսենոֆոնի ու Տրդատի ժամանակներից ի վեր խաղողի կուլտուրայի մեջ, նրա մշակության ու վերամշակության ձեռի մեջ առանձին մեծ փոփոխություն չկա: Այդ կուլտուրայի մեջ առաջին անգամ «արմատական փոփոխություն» կատարվեց, յերբ սարսափահար ամբոխը ծածկեց այդ դաշտը, յերբ աշնանային դաժան ցրտերին այգիներում սկսեցին հարճատել խաղողի թփերը, մերկ, կմախքացած մարմինները տաքացնելու համար...:

Յեկ բոլորովին սխալված չենք լինի, յեթե ասենք, վոր դաշնակցությունն առանձին յեռանդով սկսեց ավերել մեր այգիները, վառելափայտի վերածել խաղողի վազը և սխտեմատիկ կերպով կործանել այգեգործությունը մեզ մոտ:

Ավերիչ, այրունոտ այդ թաթը կտրելուց

հետո միայն մեզ մոտ հնարավոր եր իսկական այգեգործության հիմքը գնել, հեղաշրջում առաջ բերել այգեգործության Տրդատյան և Քանոնքոնց յան յեղանակների մեջ:

Հմենց Տրդատի ապարանքի մոտ, ուր գեռ յերեկ հնարավը կտարարի պես ծանրացել եր դաշտերի վրա, հոնդում են ելեկարպութանները, և այգեգործությունը մտնում է իր պատմական գարգացման նոր հունը: Դաշտը, վոր ամայի յեր, վոր հաղիվ անփառակի ցանցառ փշերն եր մնում, նորակառույց ջրանցքի ջրերի ամակ, խորհրդացին տեխնիկայի հոնդունի տակ կյանք և ամուսին և Փարաքարից մինչև Վաղարշապատ շիկացած տափառանը վեր և ածվում պաղարեր վիթիւարի մի այգու...:

ՅԵՐԿՈՒ ԿԱԼՎԱՆՑԱՏԵՐ—ԱՇԽԱԾԻԿ ՅԵՎ,
ՃՈԳԵՎՈՐ

Փարաքարից ցած փոփում և լայնարձակ ու արգավանդ դաշտը: Արգավանդ և ամուր Ջուրը չի հասել այդտեղ: Դարավոր ազգ ցեմենտել ե հողը, իսկ ճահիճները ձգել են մինչև Խաթունարի: Կարմածատերն ընկել ե միայն այն պատրաստի պատառի վրա, վոր աշխատավոր բազուկը բնության գեմ մաքառելով մաքրել ե աղից, ջրեկ ու հող դարձրել: Այսպիսի մի Դակիթափա—8

սպատրաստի պլատառ եր 35—40 հեկտար տարածությամբ արդավանդ այն հողանալը, փորի վրա ամրացել եր կարգածատեր Աթաքելյանը:

Այստեղ գեռ մնում են նրա ախրապետության բեկորները՝ մնում եւ «կինզը»՝ ուր կլողել եւ մոտակա գաշտերից բերված չալթուկը, ամբարը՝ ուր կուտակվել են ացն արարանցի մշակների միանակերի ուժով և մասանը, ուր ամբարվել եւ զինին:

Դիմացը Զվարթնոցն եւ ըջակա բերի ատափարակով, մյուս՝ ավելի արյունաբեռ կալվածատիրոջ՝ Եջմիածնի վանքի՝ յերբեմն սեփականությունը:

Աշխարհիկ ու հոգնոր բռնականների լծի առակ հեծում եր վոչ միայն աշխատավոր մարդը, այլև հողը՝ գորտիքեակ նա խոշտանդվում եր փեզիքապես: Արագությամբ հյուծվում եյին մայր հողի սլարաստի, առողջ մասերը միայն, վորոնք առանց ծախքի մեծ շահույթ եյին բերում: Հողի անսպառ առարածությունները՝ աղոտ, ժահրուա ու ճահճոտ—հազարամյակների ընթացքում իրենց վրա մշակույթի հետք չեն կրել և սպասել են իրենց շուժով, մշակող ու գուբգուրող նոր տիրոջը, իրավունք նվաճած և սպառազինված աշխատավոր մարդուն:

ԿՌԻՒՆ ԱՎԱՋԻ ՅԵՎ ԱՄԼՈՒԹՅՈՒՆ ԴԵՄ

Մեր աչքը սովոր եւ Դալմայից դենը ավաղ ու թփեր տեսներ: Սովոր եւ դարերն են արմատավորել այդ սովորություններ:

Յերբ մեր ջոկատներն սկսեցին՝ կատաղի կոփը քարի ու խճի գեմ, յերբ նրանք հաղթեցին շոզը, ծարավը և Սարդարաբագի՝ տափաստանից քամու թերեռվ յեկող փոշին, խրամատները շարվեցին կողք-կողքի՝ ուղմանակատի զուգանեռ դիրքերի նման:

Այժմ Դալման անցնելուն պես՝ այլիս անմիջապես չի սկսվում անապատը: Մկանում են խաղողի մատղաշ շիփերի կանոնավոր շարքերը, պատվի առած պիոներական շարքերի նման:

Ճածում, Փարաքարի տակ, նորատունկ այգիների գաշտը վաղը բերք կտա—առաջին բերքը՝ նրա մոտ կոփ եւ անապատի գեմ, հզոր տեխնիկայի և մեր բանվորական ջոկատների կոփը դարավոր անապատի գեմ—ավագի ու ամլության գեմ:

Այդ կուփում մենք սանձում ենք բնության տարերքը և առաջ ընթանում քայլ առ քայլ: Արագությամբ փոխվում եւ անապատի կերպարանքը:

Մեզ հաջողվեց հսկա դրենաժների միջոցով

լճացող ջուրը հողի ստորին յերակներից հանել
և խառնել Մե Զրին ձահճաները չորացան: Զքա-
ցան: մոծակի ամպերը և ստացվեց հումուսով
հարուստ հողը: Նորակառուց ջրանցքն իր ձյու-
ղերը փոեց անապատում արյունատար անոթ-
ների նման և Զանդվից կյանք բերեց խոպան
հողին: Հողը լվացվեց և աղատվեց իրեն կաշկան-
դող հազարամյա աղից: Առվույտի և այլ մշա-
կույթների միջոցով բարելավվեց հողի ստրոկտու-
րան: Յեկ ահա պատրաստ և հողը նոր, սոցիո-
լիտարան այգեգործության համար:

Յերրորդ խորհանութեառության գիրեկառը ընկ-
ներսեան իր ձեռքի տակ արգեն ունի այդ պայ-
քարի հանրագումարը:

«Տար տարի առաջ Արաքելյաններից ժառան-
գուրյուն կար»

11 նեկտար այգի յեկ 30 նեկտար չայրուկիու-
նացանատիկի հողաւաս: Եռուն տերիտորիայի վրա
այժմ ունեն 11 նեկտար հին այգի, 190 նեկտար
խաղողի նոր տայգի, վարից 54 նեկտարն արդեն բերք
և տալիս, իսկ մնացածը բերք կտա նետքինեն՝
առաջիկա յերկու տարիս ընթացքում: Այս գարնանը
տա որում զգել են 89 նեկտար նոր այգի: Պազ-
առ ծառերի այգիներ զգված են 270 նեկտար
տարածության վրա: 180 նեկտար տեղ նատկացված
և առվույտի: Հացանատիկների յեկ այլ կուլտուրա-
ների համար յուրացվոծ է 750 նեկտար հող: Մի
քանի տարիս ընթացքում անապատից խլած է 1300
նեկտար ընթիր հող, ամենաքննիր հողն այգեգործու-
րյան համար»:

Ա.Ռ.Ա.Պ.Ե.ԱԿ.Ա. Դ.Ռ.Թ.Ա.Ն. Ա.Ռ.Ա.Ս.Պ.Ե.Ա.Ա.Ա. ՀԵՐԱ

Այդ տարածությունը մենք խլել ենք բնու-
թյունից ավելի շատ բազկի ուժով, վողերու-
թյան ուժով: Այժմ զրան գումարվել և հզոր
Տիվանիկան, մեզ ոգնության և յեկել ելեկորո-
գութանը:

Անյյալ աշխանից Վազպատում հիմնվեց մե-
քենակարուկայանը, առաջինը և առայժմ միակը
Խորհրդային Միության մեջ: Առաջին ագրեգատը
գործի անցավ և մեր ուժը տանապատկվեց,
հարյուրապատկվեց:

Մարդը խրամատոներ և փորել այդ գաշտում
և անկել և խաղողի վուտը: Փորել և որեր,
ամիսներ, տարիներ: Իսկ գործն առաջ և գնացել
թիզով, արշինով, սաժենով: Այժմ խրամատը
փորկում և վայրկանը յերկու մետր, բուլին
հարյուրքան մետր արագությամբ, իսկ եկեկորու-
գութանի խովը խրկում է 60 սանտիմետր, մինչև
հողի ընկերը: Ամենի այդ գութանի խովը, վորը
շ50 փութ և կշռում, պատում և զոերի կուրծքը,
ծամում և խիճը հեքիաթային վիշտավի նման ու
առաջ և վաղում վայրենի մի հոնդյունով: Պաշ-
պատե լարն ուժ և ստանում 14 կիլոմետր հե-
ռավորության վրա զանգվազ Յերևանի հվարո-
կայանից, և խրամատները շարգում են զարմա-
նալի արագությամբ:

Մի փոքր հաշիվ վոր առաջին հ այ
անհավատալի կթվա: Մայիսի 16-ին ելեկարո-
գությունը մեկ որում (16 ժամում) չըրս հեկ-
տար պլանտաժ ե արել: Մեկ հեկտար ձեռքի պլան-
տաժը պահանջում է 2000 մարդ որից ավելի,
յեթե պլանտաժը կատարվում է համատարած կեր-
պով և ելեկարոգությանի կատարած աշխատանքի
վորակով: Ուրեմն այդ որը ելեկարոգությանը չորս
բանվորով 8000 մարդու զործ ե կատարել: Յեվայդ
այն ժամանակը յերբ մեքենան աշխատում է որական
յերկու հերթով, աշխատում են առաջին արագու-
թյամբ, մինչդեռ նրա կարողությունը հասնում է
4-րդ արագության, այսինքն՝ նա կարող է վայր-
կանում 5 մետր առաջ վաղել՝ ներկա 1,22 մետրի
փոխարեն: Յեվ աշխատում է հիվանդագին ընդ-
հատումներով: Հնարավոր ե մեքենան աշխատեց-
նել յերեք հերթով ու լրիվ բեռնավորումով և
այդ գեպքում նա կատարի որական 6—7 հեկ-
տար պլանտաժ ու կիմայի 12—14 հազար բան-
փորական ձեռք:

Իսկ յերբ յերկրորդ ազգեգամն ել ստացվի,
(վորն արդեն ուղարկված ե) ... այն ժամանակ
մենք գեռ բախտ կունենանք Զվարթնոցի պա-
տերի մոտով անցնելու:

* * *

Այս ելեկարոգությանը առաջին հնդամյակի
ճնունդն ե, խորհրդային յերիտասարդ ու հղոր

մեքենացինության արագություններից մեկը:
Ամենի այդ մեքենայի ելեկարտկան բեռնոր-
դի ճակատին փայլում է «Օր洛վսկի զա-
ման» մակագրությունը: Գութանի
մասին մոտավոր գաղափար տալու համար բա-
փական ե ասել, վոր նա ունի 120 ձիու ուժ և
որական մի քանի անգամ կարում ե յերկաթա-
լարից հյուագած հաստ պարանը: Նա աշխատում
ե յերկու ելեկարտկան բեռնորդի միջոցով, վո-
րոնք ուր վոր կանգնում են, թաղվում, են գետ-
նի մեջ իրենց վիթխարի ծանրություն պատճա-
ռով: Մարգը, վոր կանգնած ե զութմանի խոփի
մոտ, թվում ե թե մի առաջին ու փայլուն պա-
տի առաջ ե կանգնած: Այդ խոփը մոտ յերեք
մետր լայնություն ունի, իսկ գութանի ձեռիչը
(գանակը)՝ մեկ մետրից ավելի: Վիթխարի այդ
խոփը հողը շուռ ե տալիս ու բարդում կողք-կողքի
ծովի բարձրացած ալիքների նման:

ՄԵՂԱԿԻՑՆՅԻ ԽՈՍՔ ՄԵԽԱՍՆԵԿ ԽՈՍԹԻՒՆ

Մենք բավական հիացանք ելեկարոգությա-
նով: Այժմ ոբյեկտիվորեն քննենք նրա կատարած
գործը: Մեխանիկը՝ Տամաշի խոփին ե, միջա-
հասակ ու միջին տարիքի մի ոռուս: Աշխատել ե
Դնելորութրոյի կառուցման ամենակարևոր ճա-
կատամասերից մեկում՝ զիծ և անց կացրել զեպի

Դոնքասի հանգերը։ Այժմ նա Փարաքարի գաշաերումն եւ ելքարոգութանի վրա։ Նա հավանում եւ իր աշխատանքը։ Յես եւ քիչ վերև զովասանքը խոսք ասացի այդ իրոք վոր հոյակապ դործի մատին։ Բայց յես մեղադրանքի խոսք եւ ունեվ մեխանիկ Իոսիֆի դեմ։

Եեթե Իոսիֆին խոսեցնեմ՝ նա կաշխատի ապացուցել վոր հողը վատ ե, ցեմենտացած, քարում ե։ Ամենենին։ Հողը հիանալի կերպով փափուկ ե։ Բոլորովին անվարժ մարդն ել տեսնում ե, վոր վարը կատարվում ե անհամաշատ, խոփը 40 սանտիմետրից հաճախ խրվում ե մինչև 70 սանտիմետր, գութանը թափ ե տափս առնելի ուժով և լարը չի դիմանում։ Մինչդեռ նորմալ խորությունը 50—55 սանտիմետր պետք ե լինի, վարը կատարվի միալար ու հավասար խորությամբ։ Այլառես՝ դուք որական ունենում եք 3—4 ժամ պարապուրդ, նախատեսնված 3 հեկտարի փոխարեն ներկում եք որական $1\frac{1}{2}$ —2 հեկտար։ Ուրիշ խոսքով՝ մենք որական 2—3 հազար բանվորական ուժ ենք կորցնում միայն այն պատճառով, վոր Իոսիֆը վատ ե աշխատում, վոր ինժիները շաբաթներով զրասենյակից գուրս չի դալիս։

Եես մեղադրանքի ուրիշ խոսք ել ունեմ վարպետ Իոսիֆին Նրա կատարած հերկի վորա-

կը գեռ ցածր եւ Հերկի յերկու ծայրեց մեկ-յերկու մետր լայնությամբ չփարած շերտեր սեպի նմանի խրված են սեացած դաշտի մեջ։ Դրանք «փարակներ» են, ինչպես գյուղացիներն են առում—անսփույթ աշխատանքի հետևանք։ Առաջինք, վոր շրջած հողը բարձրացրած ալիքների նման շարված ե կողք-կողքի։ Նկատում ես, վոր այդ «ալիքներից» մի քանին անսովոր կերպով բարձր են։ Այսուեղ Իոսիֆը մատնվում ե։ Այդ նշանակում ե, վոր գութանը հողը դիզել ե չփարփած նեղ շերտերի վրա։

Ելեկտրոգութանը բանեցնելու համար հարկավոր ե պատրաստել նոր ուժեր, նոր մարդիկ, վորոնց ենուուզագմբն գումարվի սրտացավ վերաբերմունքը դեպի մեր գործը։ Այդպիսի մարդիկ արդեն առաջ են գալիս մեքենայի աշխատանքին գուգընթաց։ Ծանոթանանք նրանց։

1. Մանեյոր Գուրգեն, —աշնանից մեքենայի վրա յեւ արդեն տիրապետում ե զեկին և ելեկտրական բեռնորդին (այն մեքենային, վորն ուժ ե տափս գութանին)։ Այժմ ագրեգատի բրիդագի զեկումարն ե։ Կարող ե հերկել բավական վարպետությամբ։

2. Սուրեն Գուփովյան, —Լոռեցի տրակտորիստ, նոր և սկսել աշխատել ագրեգատի վրա և այժմ հիանալի կերպով զեկավարում ե գութանը։

Կարող եւ աշխատեցնել նաև բեռնորդը:

3. Տիգրան.—անվորակ, անդործ և անճարակ մի մարդ եր Հունաստանում, կծկված կապիտալի ուժիմի, սովոր ու զրկանքի լծի տակ: Այժմ հսկա ելեքտրոդութանը հպատակեցնում ե Երես: Մի տեսեք, թէ ինչ եւ ապրում այդ մարդը, յերբ իսուիքը բանի յեւ գցում մատորը և Տիգրանը բարձրանում ե զեկի մոտ:

4. Կոմիերթական Դալուս.—Այս տղան հրայրունք եւ առաջ բերում իր աշխուժ, կրակոտ շարժվածքով, իր այրված ու մշտաժայտ գեմքով: Յերբ մեքենան ոկտում եւ աշխատել նա ներքին բերկրանքից շառագունում եւ, անհանգիստ շարժում: Եր եւ անում, վազում ե զութանի կողքով և ապա զնում հսկի ծայրը՝ ուղղակի բրիզագիր փուրգենի մոտ:

Յե՞րբ ես սուլլ ձեսքս տալու, աիր յես մեռա...:

Յեվ յերեկ, ժամը յերկուսին, ելեքտրական զութանի զեկը առաջին անգամ տվին կոմյերթական Դալուսի ձեռքը: Ընկերները պատում են, վոր նա ուրախությունից ու հուզմունքից զողում եր: Հսկա զութանին նա տիրապետել ե միայն 10 որ սովորելուց հետո: Յեվ վոչ միայն զութանին: Ամենից դժվարն ելեքտրական բեռնորդն ե, մի բարդ մեքենա, որին տիրապետե-

լու համար ամիսներ են պեսք: Բըիզագիր Գուրգենը հիացմունքով պատմում ե, թե ինչպես այդ կոմյերթականը 10 որից հետո արզեն վարպետորեն աշխատացնում եր բեռնորդը: Իսկ այսորմեր հարցին նա համեստորեն պատասխանում ե, վոր ինքը զես սեագործ ե:

ԱՅԼ ՄԵՂԱԳՐԱՆՑՆԵՐ, ԱՅԼ ՀԱՍՏԵՆԵՐՈՎ,

Յերկիրը պարտավորեցրել ե Յ-րդ խորհումն-տեսության բանվորներին ու զեկավարներին այս գարնանը անապատային հողում 325 հեկտարի վրա խաղողի նոր այգի զցել՝ ամենաշատը մեկ տամսվա ընթացքում: Այդ չտեսնված թիվ ե, յեթե նկատի ունենանք, վոր անցյալում ամենածաղկող պյուղը մեկ տարում հազիվ 3—4 հեկտար այգի սնկեր: Զե՞ վոր հենց այդ 3—4 հեկտարը 6000 բանվորական ուժ ե խլում: Այն, ինչ կալվածատեր Սթաբեկյանին հաջողվել եր ճորտական աշխատանքի միջոցով կատարել 15 տարվա ընթացքում, խորհունտեսությունը պետք ե աներ վոչ ավելի, քան մեկ որում: Նա պետք ե որական տնկեր 10—15 հեկտար այգի:

Սկսվել ե բամբակի մասսայական ցանքը, ուսուի ջուրը տրվում ե պակաս և հիվանդագին ընդհատումներով: Յերբ ջուր ելինում, որական տնկում են 10—12 հեկտար այգի: Ջուր չկա,

գործը կանգ ե տանում, քանի վոր մատերը միաք չունի անկել առանց ջրելու։ Յեկ այժմ թեև 257 հեկտար տարածություն արդեն պլանառած է արգած, սակայն դրանից այզի յե տնկված միայն 90 հեկտար։ Այդ ել խոշոր թիվ է, բայց այն չե, ինչ հնարավոր եր անել։

Ի՞նչ ե մնում անելու այժմ խորհուտեսությանը։ Նրան մնում է ուժերը շպրտել այզիների մշակության ճակատը, բերքատվությունը բարձրացնելու համար մզփող պայքարի ճակատը։ Իսկ այս ճակատում գործն այնքան ել լավ չե։ Մենք յեղանք շարատունկ այզիների լայնարձակ դաշտում։ Մենք ականատես յեղանք, թե ինչպես շարքերի արանքում վեր ե բարձրացնել մոլախոտը և ըջապատել ե նոր տերեւ տված թույլ միվերին։ Շիվերը, մատաղ վաղն այժմ հուսահատոքնեն կովում են մոլախոտի զեմ։ Այդ կովում նա կողարավի անպայման, յեթե դիրեկցիան, բանվորներն ողնության չհամահն։

Դեռ 15-րդ գորում եր, վոր ֆրանսիական հայտնի դրոդ ու դյուզանական Ոլիվիյե Դը Սերը խաղողի մատաղ վաղը նմանեցնում եր վատուժ յերեխայի, վորին յեթե հատուկ ինամք չտանեա՝ անպայման կմահանա։ Գյուղատնտեսդիրեկտոր Ներսեսը համոզված է դրանում։ Բայց իր տրամադրության տակ ունեցած 125 ձին

նա ամեն կողմ զցում է, բայցի կուլտիվացիայի փրութից։ Մենք սպասում ենք, վոր 6 խոփանի կուլտիվատորները կմանեն նորատունկ այզիների մարդերի մեջ և իսկական պայքար կկազմակերպ-վի մոլախոտերի դեմ։

Ճ.Ն.Ս.Պ.Ս.Բ.Հ. Ա.Ռ.Ս.Զ.Ա.Վ.Ո.Ր ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Մեր այդեգործության թմբային սիստեմը հազարամյակի պատմություն ունի։ Այդ սիստեմը վորեւ աեւնինիւկան նորմուծություն, մեքենայի վարեւ աշխատանքի չի հանդուրժում և խարսխված է անհատական, մեքենագուրկ տնտեսության բար-զայի վրա։ Այդ սիստեմին այժմ կառչած են մնում միայն այնպիսի մարդիկ, վորոնք իրենց հետեւց դեռ չեն այրել կամուրջները։

Խոշոր, սոցիալիստական այգեգործության համար հարկավոր է, վօրպեսզի մեջտեղից վերանան այդիներն իրարից անջատող հնամյա պատերը, ինչպես և մեջտեղից վերանան այդուներկա թմբերը՝ իրենց ճապաղ ու փուլած վաղերով։ Հարկավոր է, վոր տեղ բացվի միջ-շարքյա մեքենաների համար—տրակտորի, կուլտի-վատորի աշխատանքի համար։ Այլապես մարդկային վարպիսի բազմություն է հարկավոր հենց թեկող միայն 3-րդ տնտեսության համար։ Զե վոր 4—5 տարուց հետո նա 3000 հեկտար խա-

դողի վորթի ահուելի մի տարածություն կունենա:

Այգեգործության այդորինակ մեխանիզացիան ֆանտազիա կմասք հին կարգերում, անհատական խղճուկ անտեսությունների՝ չոռին, յերաշտին ու կարկափին ձորաացած ահանեսությունների պայմաններում: Այդ հսարափոր դարձավ անտեսության նոր ձեերի ուժով—խորհրդային յերիտարար տեխնիկայի ուժով:

Այդ նոր սիստեմով հսկայական չափով կրաստվում է ձեռքի աշխատանքը, արակտորը վաղերի շարքերի միջով իր հետեից տաճում է 10 խոփանի կուլտիվատորը և չտեսնված արագությամբ արմատախիլ է անում մոլախոտերը Նա որական 10—12 հեկտար կարող է կուլտիվացիայի յենթարկել, այսինքն մի հոգով մի ամբողջ գյուղի աշխատանք...:

Այգիները փորելը, անդա աշնանը թաղելը, տաժանակիր աշխատանք է թմբային սիստեմում և հազարափոր բանվորների աշխատանք է խլում շատ թե քիչ կանոնավոր այգիներ ունեցող կորանտեսությունից: Շաբային սիստեմի ժամանակ մեծ մասամբ տրակտորն է կատարում այդ աշխատանքը:

Այսպիսով, որինակելի այգեգործության հիմքն արդեն դրված է Յ-րդ խորհանտեսութան մեջ: Այդ որինակով և, վոր պետք է ընթանա մեր

կոլանատեսական ու խորհոնտեսական այգեգործությունը: Բացինա և Մեքենայացված Անդաս սրսկումները «չորի» գեմ մենք պետք է կատարենք մեքենայով յերկներից, ինչպես արդեն կատարում են Փարաքարից քիչ ցած՝ խորհանտեսության լայնարձակ այգիներում:

* * *

Այսքանը ահսանք մենք մայիսի 20-ին, մեր շնչագայության ժամանակ: Այսուհետեւ մենք այգեգործական խորհանտեսությունը թողինք բավական վառ տպագործություններով:

Այժմ ընթանում ենք նորակառուց սքանչելի ծառուղիով:

Դեպի Փարաքար ձգվում է նորատունկ այգիների կանաչ պանորաման:

Ներքեւում ելեքտրոգութանն է հանդում աղմուկով, իսկ մեր առաջ, գեղի Աշտարակ փուլած է ամայի, քարքարոտ ու բլրաշատ գաշտը, վորն սպասում է փրկարար ջրին, մեքենային և նոր, սոցիալիստական մարդու սահեծագործ բազուկներին:

Վաղը Զանգվի աջ ու ձախ ափերը կկտրեն Նաերի ջրանցքները:

Զախն արդեն հաղթանակում է, Զանգուն

արդեն սլանում է ցեմենտայս պատերի ու դյու-
կերի միջով:

Պայքաբն այժմ թեժանում է Ազբաշի մոտ:

Վաղը նա արծաթե գոտի կկապի մինչև
Սպազմայն, իսկ աջակողմյան ջրանցքը կվողովի
Յերեանի ու Աշտարակի միջև ընկնող ասանցակ
հաղարավոր հեկտար խոպան գուերը:

Մենք հոռթյունից կողոկենք 50 հազար
հեկտար ընտիր նոր հող՝ այգու, ծխախոտի, բամ-
բակի համար: Վաղը պատրաստ կլինեն Դնեպրոս-
տրոյի հայկական գավակներ—Քանաքեռի, Գյու-
մուշի, Սոլակի գիղանտները: Զանգվի վրա և նրանց
ուժով ելեքտրոքարշերը կողանան Վաղպատ ու
Աշտարակ՝ կանանչաղարդ ծառուղիներով և չքնաղ
պուրակներով:

Կլինի, այդ շուտով կլինի: Անպայման կլինի:

ՖԱՆՏԱՍԻԿ ԲԱՍՏԵՆԸ

1.

ՖԱՆՏԱՍԹԻԿ ԲԱՍՏԵՅԱԾ

Շարուր:

Նախիջևանից այս կողմն լնկնող բերրի մի շրջան ե դա: Արաքսի ափերից մինչև Խաչիկի լեռները ձգվում ե արդապանուդ դաշտը: Արևելյան Արփաչայը, վոր Դարալազյաղի լեռնաշարհում փրփրած ե ու կատաղի, այստեղ կրքերն իջած ե և հոսում ե հանդարտ:

Ասում են, վոր դա պատմական «Տղմուտ» գետն ե: Ցել իրոք, գետը տղմուտ ե: Պարհանը հեղեղը սրբում ե Դարալազյաղի լեռնալանիջերը և Արփաչայը բեռնավորված դեղին տիղմով՝ արշավում ե Շարուրի դաշտերի վրա: Տիղմն այդտեղ հին, ազգայնական-մտավորականին «Վարդանանց պատերազմն» ե հիշեցնում, վոր իբր թե տեղի յե ունեցել այդտեղ՝ Տղմուտի ափին: Սակայն դեղին տիղմն ինձ սպիտակ բամբակի մասին ե հիշեցնում, կոլտնտեսական սպիտակ վոսկու:

Ամեն տարի, դարեր ու դարեր շարունակ յեկել ե նա՝ լեռների տիղմը: Ազգբում յեկել ե կատաղի, քարերին խփվելով, ապա գետի ստորին

հոսանքում հանդարտվել ե ու նստել ծանծաղուաներում, նստել գաշան աջ ու ձախ ակոսող ջրանցքներում, պղտոր ջուրը ծծվել ե ցելիբում, և նողի յերեսին նստել ե տիզմը:

Յեվ նրա ուժով վիթթել ե բամբակենին:
Այսպես ե զարնանը, ամառնամուտին:

Հուլիսն այստեղ բերում ե իր հետ արեել-յան անապատներից փչող աաք ու չոր քամի: Դադարում ե զետի աղմուկը և ջուրն իջնում ե ջրանցքներում: Այդ ժամանակ ջրի կաթիլը դառնում է վոսկի: Բամբակն սկսում ե թառամել գեռ կոկոնը չըացված, ցորենը դալիսանում ե հենց «կաթն ընկնելու» որերին և անժամանակ զեղնում, խշխշում: Յեվ բահի կոթեր են ջարդվում, արյուն ե հոսում բանդերի մոտ՝ ջրի համար:

Այսպես ե յեղել անցյալում, ջուրը տարել է նա, ով ուժ ե ունեցել ով գնել ե վեղին վուկով, կամ բահով տապալել ե հակառակորդին ու մնացել անպատիժ:

Այստեղ ջրի պրոբլեմով զբաղվել են շատ վաղուց: Զուրն այդաեղ վոսկու հորդառատ աղբյուր եր: Բեգական հողի վրա տեղավորված թուրք ու հայ աշխատավորությունը քրտինք ու արյուն ե վճարել ջրի դիմաց: Արփեցի ալեհեր ծերունին, վոր կես դար ճորտ ե յեղել զետապինյա-

հովտում, անցյալի մասին պատմում ե վորպես գերեզմանային իրականության մասին: Նա չորս անգամ ծեծվել ե մերձիման լինելու աստիճան, վորովհետև բեղի ԴԱՃՐ (կնիքը), վոր դըրված ե յեղել ցորենի կույտի վրա, վոր քանդիւել և անձրևից, քամուց, կամ պատահական մի անասունի վոտնահարումից: Յեվ տարել ե բեղը չորսից մեկը, ջրի, հողի դիմաց:

Այս, Շարուրը ջրելու պրոբլեմը կար վաղուց, սակայն գա վոչ այլ ինչ եր, յեթե վոչ ճորտատիրական կապանքներն ուժեղացնելու պրոբլեմ, հարամ «վաստակի» աղբյուրները վարարեցնելու պրոբլեմ: Այդ պրոբլեմը «լուծել ե» Ռուստամքերի Նա գայլի ախորժակով եր նայում մյուս բեղերի ջրի բաժնին, լեշից նրան բաժին չեր հասել:

Բաղարչայը (Սիսյանի շրջան) բաժանված է Դարալաղյաղից մի լեռնաշղթայով: Լեռնաշղթայի մյուս յերեսով հոսում ե Բաղարչայի վտակներից մեկը: Ռուստամ բեղը ճորտերի բանակներ և հանել լեռնաշղթան, ջրանցքը լեռնանցքով անցկացրել այս յերեսը: Բաղարչայի ջուրը խառնվի և Դարալաղյաղի Արփաչայ վետին և հոսել Շարուր: Այստեղ Ռուստամբեղն ստացել ե այնքան ջուր, ինչքան Արփաչայն ստանում ե Բաղարչայից յեկող ջրանցքից: Իր ժամանակին Բաղարչայից յեկող ջրանցքից: Իր ժամանակին չտեսնված դործ համարվեց դա, անզուրական

բարեգործություն «Ժողովրդի» համար։ Պատմում են, վոր «յերկու բանի ոեխ» կազմող այդ առուն Ծուստամբեգին ծով հարստություն ե բերել։ Նրա վոռոգած դաշտերից ճորտական բամբակը, ցորենը առատությամբ հոսել են դեպի բեգի ամբարները։

Այդ առուն այլևս չկա։ Նա կործանվեց հին կարգերի հետ միասին։ Յեկ թույնով ու վրեժով լցված շարուցի ազատագրված ճորտը չափսուաց, վոր ցամաքեց Ծուստամբեգի առուն, վոր այնքան դժբախտություն եր բերել իրեն։

Միայն Ծուստամբեգի առվի ցամաքելը չի պատճառը, վոր այսոր Շարուրում ջրի հարցը դրված ե իր ամբողջ սրությամբ։ Շարուրում արագ հեղաշրջում ե տեղի ունենում տնտեսության ձևերի մեջ։ Թուրք աշխատավորության 60 տոկոսն այստեղ կոլտնտեսությունների մեջ ե։ Նորաշենի նորակառուց մեքենատրակտորային կայանի «պողպատե ձիերը» դաշտ են պահանջում, լայն ու ընդարձակ դաշտ։ Նրանք՝ կոլտնտեսականները, շարուրցի ունչպարը, կայանի աշակցությամբ բամբակի ցանքն ընդարձակեց շտեմնված չափերով, տարեկան 60—70 տոկոսվ։ Յեկ այժմ և յերկաթե ձիերը և բամբակը գետ են առնում հողի պակասին։ Թուրք ազգայնականը, մուսավաթը, կուլակը, աչօք տնկում են

հարեվան ջրդի հողերին։ Շարուրի աշխատավորության և որդանների ուշքն այլ տեղ ե ուղղված։ Դեպի ամայի տափաստանը, վոր և Արաքսի ափերով, և Խաչիկի լեռների ստորոտներով ձգվում ե Որդուբաթի, Նախիջևանի կողմերը և ապա վորոշ ընդհատումներով շարունակվում մինչև Մուղան, մինչև Միլ անապատը, մինչև Կասպից ծովի ավագուանները, վորտեղ նա լայնանում, հոկայական մի դաշտ ե կազմում։

Այդուեղ գարեր շարունակ անգործությունից «Ժանգոտում» ե տափաստանի արգավանդ հողը՝ հարյուր հազարավոր հեկտարներով։ Այդ՝ բամբակի ապագա հայրենիքն ե, «Կովկասյան Թուրքեատանը», վոր վոստգվելու դեպքում տալու յեմեկ միլիոն հեկտար բամբակի նոր հող, այսինքն՝ չորս անգամ ավելի Անդրկովկասի բամբակի այս տարիվա ամբողջ տարածությունից։

Տեքստի արդյունաբերության վիթխարի բաղան կազմակերպելու գործին ե ձեռնամուխ յեղել Անդրկովկասյան կառավարությունը։ Ֆեղերացիայի խոշորագույն այդ պլոտեմը լուծվելու յեմեր ջրային ուսուրաների սացիոնալ ոգտագործումով։ Անդրկովկասի լեռներից հոսող ջրի անսպառ հարստությունը պետք ե ամբարել՝ Միլի անապատին, Մուղանին, Արաքսի և Կուրի գետափնյա տափաստաններին ամառովա շո-

գերին ջուր հասցնելու համար, անսպառ ջրի այն պաշարներից, վոր աշնանը, ձմեռը, գարնանն անարգել ու անտեղի հոսում են դեպի կուր ու Արաքս գետերը։

Թուրդիստանում, Սխայանի շրջանի Բազար-չայ գետի վրա, Անգեղակոթում, Շամում, Որդուբաթում և ապա Դարալազյազում ծրագրվում ե կառուցել հսկա ջրամբարներ, արհեստական լճեր, վորոնց ուժով մենք քնությունից պետք ե պոկենք հազարավոր ու հարյուր հազարավոր հեկտար նոր հող, կոլտնտեսական ու խորհնտեսական բամբակի տակ դնելու համար։

2.

Վեդիից ու Բասարգեչարից գետի Զանգեցուր գուգահեռ ձգվող լեռնաշղթաների մեջտեղով հոսում ե Արեւելյան Արփաչայը։ Նա՝ վոր սկսվում ե Խստի-Սույի լեռներից և Հուշիբիլակում։ Սյունյաց Վասակ իշխանի ապարանքի բեկորների մոտ հորդառատ մի տոռ յե, իր միջին հոսանքում Քեշիշյանդի մոտ մի գետ ե Դեբեդի չափ։ Իսկ քիչ ներքեւ նա Դոյթուրի գետն ընդունելով իր մեջ՝ իր ստորին հոսանքում դառնում ե Ջրառատ, վոչ պակաս քան մեր Զանգուն։

Արփա գյուղից վերև ձորը նեղանում ե ու փոխվում կիրճի, իսկ քիչ ցած՝ Այնազուրից

ներքի, յերկու կողմից վիթխարի ժայռեր մոտենում են իրար այնքան կիպ, վոր գետը զայրույթով փրփուրներ ե արձակում իր կոկորդը սղմող ապառաժների դեմ։ Այնտեղ խոր անդունդ ե, հսկա մի գուռ՝ քարե կողերով։ Փակիր նեղիկ այդ դուռը խորհրդային ամուր բետոնով, փակիր այնքան ամուր, վոր Արփաչայը զարնվի ամբարտակին ու յետ դառնա, և կարճ ժամանակում տձեւ ժայռերն ու զանգվածները, անձունի խորդ ու բորդը, կխորասուզվեն ջրի տակ և կըգոյանա գեղեցիկ մի լիճ սղմված կոկորդով։ Ահա Շարուրի բամբակի գաշտերի վոռոգման վողջ պլոբլեմը, ահա անապատը հաղթելու հզոր «հրետանին»։ Այդ արդեն վերացական յենթադրություն չե։

Թիֆլիսից յեկած հանձնաժողովը քանի որ ե հովտում «չափ ու ձեւ» ե անում։ Պլանները քաշված են, մի քանի գյխավոր հաշիվսեր արած։ Գետափնյա ժայռերն իրար միացնող ՊԼՍՏՆԱՆ կլինի յերկաթ-բետոնից՝ 90 մետր բարձրությամբ և կնստի այնքան եժան, վորքան բնությունն ինքն ե կառուցել ամբարտակի յերկու կողքը, բարձրաբերձ ժայռերը, լերկ ու վողորկ պատերի նման։ Տեխնիկայի վերջին խոսքի պողպատյա դունակները կղրվեն այդտեղ, վորոնք կաշխատեն հզոր մի մոտորի ուժով։

Հեռներից յեկող հեղեղները սահմարձակ չեն հոսի ցած՝ կասպից ծովի գրկում անարդյունք կորչելու համար։ Նրանք կմտնեն արհեստական լիճը, հսկա բասսեյնը, վոր Ամազույի մոտերքից կծզվի մինչև Ղոյթուր գետի միացման կետը, ապա հետզհետե ուռչելով՝ կրածրանս յերկու հովտով։ Կստացվի 9—10 կիլոմետր յերկարությամբ յերկայուղ մի բասսեյն, վորը «սև որվա համար» կպահի մինչև 5 միլիոն խորանարդ ջուր։

Գեղածիծաղ այդ լճակը կփոխի Դարալագյազի անբարեհամբյուր կնճոստ պատկերը և նրա չոր, կրնտինենտալ կլիմային թարմող ու կենսարար խոնավությունն կհաղորդի։ Լիճը կփոխի քարքարոս լեռնաշխարհի կլիման և այստեղ առատությամբ կածի կանաչը, անտառները, արհեստական ծառաստանները, կզարդանա ձկնորսությունը և դարձագյազցին առաջին անդամ կը նավարկի Դարալագյազի լճի վրա։

Հեռավոր յերազ թվացող այս «Փանտազիան» իրականությունն կդառնա։

Սյունականի տարուց հետո մենք կունենանք աշխարհի խոշորագույն արհեստական լճերից մեկը, վոչ թե Ամերիկայում, վոչ թե Ալպերում, այլ այստեղ՝ հետամաց Դարձագյազում։ Սա յերկրագնդի իրիզացիայի պատմության մեջ խոշորագույն ձեռնարկումներից մեկը կինք։

3.

Յերկար տարիներ նստած ե այդտեղ նա՝ ինստելիզենցիայի պատկառելի ներկայացուցիչը, խոշոր դեմքով, ծանր շարժվածքով մարդը, վոր առանց շտապելու մտքում Դարձագյազի իրիզացիայի իր պլանն ե վորոճում։ Նրա համար խոշորագույն պրոբլեմը Հեր-Հերից Դայլախուուկառուցվելիք 4 կիլոմետրանոց առուն ե։ Այդ ձեռնարկությանը նա հավատում ե։ Սակայն 9 կիլոմետրանոց բասսեյն, գետը կանգնեցնել, գնիշիկցի Ոհանի և Թառումովների նախկին կալվածքը թաղել ջրի տակ։ Յեկ դա՝ հազար վերաս հեռու ընկած թրքական դաշտերը ջրելու համար։ Սարսափելի և ազգուրաց ծրագիր։ Բոլշեկիյան ֆանտազիայի արդյունք։

Ժխտել պետք չե, վոր հովտում մի քանի հարյուր հեկտար հող և ապա Թառումովների խրախճանքի «սրբազն վայրերը» կմնան լճի անդնդում։ Բայց դրա փոխարեն, վերև, Ղոյթուրի գետի վրա բարձրանալու յե Երդափինի հիդրոէլեկտրոկայանը—1000 ձիու ուժով։ Իսկ դա նշանակում ե, վոր ելեկտրոլարերն Երդափինից ձգվելու յեն մինչև բասսեյն և նրա ափերում դղրդալու յեն ջրհան մեքենաները։ Հողը, վոր

խանձվում ե Բաշքենդից, Որթաքենդից մինչև
Դոյթուրի գետը, կյանք ե առնելու ջրմուղներից
Ելեկտրական ուժով վազող ջրերից: 1200 հեկ-
տար բամբակի, ծխախոտի հող, բացի Միլի տաս-
նյակ հաղարներից, անա ինչ ե վերադարձնում
դաստեհն իր խլած մի քանի հարյուր հեկտարի
դիմաց:

Այդ՝ իրոք վոր «ֆանտաստիկ» գործ կլինի
Դարալազյաղի նման հետամնաց մի շրջանի հա-
մար: Սակայն իսկական «ֆանտազիան» այսուեղ
ե, վերեսում, ուր գետը գահավիժելով՝ փրփրաբե-
րան իջնում ե ցած, անցնում Սոյլանի նորակա-
ռուց հսկա կամուրջի կամարների տակով և
մահում կանաչավետ ու թփուտներով ծածկված
հովիտը: Այդուեղ սկսվում ե գետի միջին հոսան-
քը՝ այդտեղ ել սկսվում ե Դարալազյաղի աջքը,
սքանչելի այն հովիտը, վորին իշխում ելին Զան-
փոլագովները և վորտեղ լեռները քշված ազա-
տեցիք, փոռեցիք թափում ելին ճորտի քրափն-
քը: Դեռ յերեսում են Դարալազյաղի իր ժամա-
նակա ամենախոշոր գործի՝ Զանփոլագովների
առվի հետքերը՝ կամուրջի «ականջի» մոտ:

Շերամապահական խոշոր խորհնանեսու-
թյունն ե հիմնադրվում այդտեղ: Զքհանների
յերբորդ բրիգադն այդտեղ կլինդամացնի ամայո-
ցած դաշտերը: Արգավանդ հողում արագորեն

բոյ կքաշեն նորատունկ թթենիների շարքերը և
շերամի վորով կսկսի իր ստեղծագործ աշխա-
տանքը Զքհանների մյուս խումբը կորոտա ներ-
քե ծորում, ուր վերջանում են Մալիշկայի այ-
դիները և կոսովի հանգիպակած դուերը: Այդ
յերկու տեղից մենք քնությունից կարող ենք
1500 հեկտար հող պակեր: Արաեղից ե, վոր գե-
ղի նորակառուց կոլտնտեսական չորանոցներն
են շարժվելու առաջատար կուլտուրայի գումակ-
ները: Այդ հովիտներից ե, վոր սկսվում ե Դա-
րալազյաղի անտեսական կյանքի արմատական
հեղաշրջումը՝ կոլտնտեսական բազուկների և
խորհրդային հզոր տեխնիկայի անդիմապրեսի
ուժով:

Սակայն և այդետեղից ե, վոր սկսվում ե
վունոցը թշնամու բանակում և տարակուսանքն
ու թերահավատ վայնասունը հին ինտելիգեն-
ցիայի վորոշ խավերում:

Նա՝ ծերոնի ագրօնոմը, տանել չի կարող
այդ: Կախարդական հարվածով կործանվում են
նրա աղքատիկ պլանները և «իր» Դարալազյաղը
գանում ե բոլորովին մի այլ շրջան, իր փայ-
փայած վայոց Զորի ու Սյունյաց աշխարհի իշ-
խանական ապարանքների բեկորները, վանքերի
ու ամրոցների սպավոր պարիսպները սուզվում
են հերիաթային լճի տակ:

Վո՞չ դա անկարելի յե, դա հնաըավոր չեւ
Յեվ նա հուսադրում ե իրեն. թերահավատու-
թյուն ե սերմանում: Նա պատմում ե, վոր Եջ-
միածինը մի ժամանակ Հաղպատում գիտական
հիմունքներով մի տնտեսություն հիմնելու փորձ
ե արել: Խոշոր ու փորձված գյուղատնտեսներից
կազմված կոմիսիան՝ ուր մտել են ինքը, Քա-
լանթարը և հին ազրոնոմիայի կառկառուն ներ-
կայացուցիչները՝ իր յեզրակացությունները խոր-
հրդում քննության ե դրել: Նորին վեհափառը
զեկուցումները լսելուց հետո բացականչել ե.

—Փչե՞ք, վորքան կարող եք, փչե՞ք...: Ու
սապոնի պղպճակների պես հողս ե ցնդել փորձ-
նական գյուղատնտեսություն հիմնելու պլանը:

Այժմ, նա շշմում ե համեմատելիս: Նրա
ամբողջ ազրոնոմիան հիմնված ե մանր, խղճուկ
հողակտորների վրա, այդ չափով ել նա խղճուկ
ե ու սահմանափակ: Հին ազրոնոմիան արդեն կոն-
սերվատիվ ե խորհրդային խիզախ ձեռնարկում-
ների դիմաց: Դարալազյազի բասմեյնը նրան ֆան-
տազիա յե թվում, բոլշևիկյան «հիվանդու»
յերևակայության արդյունք: «Փչե՞ք, մտմտում
ե նա—վեհափառի պես,—միևնույն ե, պատնեշը
չի դիմայլի Տղմուտի պղտոր հորձանքներին»:
Նա շատ ե հավատում «հայրենյաց» այդ ջրերի
ուժին: Սակայն տեսե՞լ ե արդյոք նա խորհրդա-

յին պլատինայի ուժը, վոր այնքան ամուր սան-
ձահարել գիտե լեռնային ջրերի վայրագ տարերքը:

Յեվ այսպես, կկառուցվի, անպայման կկա-
ռուցվի Շարուրի, Միլի ջրամբարը, սնապատի
կենսատուն՝ «Փանտաստիկ բասսեյնը»:

Հոկտ. 1

1931 թիվ

Դարալազյազի

ԿՈԼԵՈԶՆԻԿ ՏԱՏԵ ԹԱՅՐՈՎԻ ԱՄԱՊԱՆՑՈՒՄ

ԿՈՒԽՈԶՆԻԿ ՏԱՅԵ ԹԱՅԻՐՈՎԻ ԱՍՏՐԱՆ ՊՅՈՒՄ

1. Ճերմակ ապարանիք՝ փարթամ կանաչի մեջ
նրանք նստած եյին վճիռ ավազանի մոտ,
նոր ծաղկած խնձորենու տակ:

Ներքեռում լեռնային գիծ գետակն ե աղմկում,
դեմք՝ սըանչելի մի ծառուղի, վորի յերկու կող-
քերից ձգվում են ծաղկած յեսամանիների շար-
քերը:

Հունական վոճով կառուցված պալատի առաջ
արծաթափայլ մի շատրվան, իսկ նրա շբջակայ-
քում ծաղկանոցներ՝ պարսկական նրբագործ գորգի
նման:

Ողբ հագեցած ե բյուրավոր ծաղիկների
բույրով, գաղջ անտառի բույրով և մեղուների
ախորժալուր բզզոցով:

Յերբ յերեկոյան հովը շընդշնդում ե կանաչ
ալեաներում, առինջեցի Մարգարիտը մտածում ե
ինքն իրեն՝ «Ես ո՞ւր բերին ինձ...»: Ու դառնում
ե Ավանեցի կոլխոզունի Արփիկին.

—Քա սե կապեն եղոնք, եսքանը մե մար-
դու յա եղե...:

Այս, մի մարդու։ Յերջանիկ մարդկանց յերջանիկ կյանքը կարկաչել ե փրկրադեղ գետակի ափին, արծաթափայլ շատրվանների տակ, զմբուխոյա տերրասներում։ Կարկաչել ե յեղիմական հնչումներով, իսկ ամառանոցի պարիսպների տակ այդ նույն կյանքը տնքացել ե «փուչ աշխարհի» հոգերի տակ։

Յեվ այժմ, յերազ ե թվում առինջեցի Մարդարիտ տատին, բարակ Ռհանեսի մորը։ Նա լվացք եր անում և հաց եր թխում ուրիշների համար։ Ծնցոտիապատ ու վոտարորիկ եյին նրա յերեխանները—Ռհանեսը, Անատոլիան, Սիրուշը։ «Յերեքին յեթե միասին թոնիրը զցեցիր, շորանոտ չեր գա»։ Յեվ նա այժմ նստած թայիրովսերի ամառանոցում, շնչում ե հարկանունուն՝ ավանցի Սրբիկին։

—Քա ոև կապեն եղոնք, եսքան ծախսը մեղ համար կանեն։ Վույ, վույ, վույ, Մասիսի չափ փող լինի, չի հերիքի, եսքան ել ծախս կանեն։ Ես ինչ ա՝ ծաղիկ, ես ինչ ա՝ ֆանթալ, ես ինչ ա՝ թքաման։ Յանի մենք եղքան արժենք փոր...։

Ծիապատ խրծիթից—թայիրովսերի պալատը։ Յեվ նա—կոլիոզնիկ տատը—վոչ միայն հանգստի տան գեղագրդումն ե շուայլություն համարում, այլի առհասարակ շուայլություն ե համարում, անհարմար ե զգում, վոր ինքն ապրում ե ձեռ

այդ պալատում։ Դարերի ստրկացնող սովորույթ, վորից գեռ չի ազատագրվել առնջեցի Մարդարիտը։ Բայց նա արդեն ազատագրվում ե։ Իր հանգստի նորդ որդն արդեն իր համար շքեղ այդ միջավայրին նա մի փոքր ընտելացել եր։

—Աչքը կարեմ թայիրովի, լուսս խավարեց սրա-նիքա դուռը լվացք անելով, հիմի յել յես պիտի տեսնեմ աշխատանքի լազաթը։

2. Մեերիմ խոսակցություն—թե ինչպես ամեն ինչ փոխվում է արագությամբ

Յերբ բժշկունին ինձ ծանոթացրեց այդ կոլխոզնիկ կանանց հետ և շտապելով հեռացափ, նրանք իմ հարցերին պատասխանում եյին անհամարձակ ու կարճ։ Առանց աղի։ Խոսքը շուռ տվինք—հանդից, տավարից, քաղհանից, հանաքներ արինք ամուսնու, հարսի ու թոռան մասին։ Կոլխոզնիկ տատը զվարթացավ ու բացվեց։ Իսկ Արփիկը քիչ անց արդեն խոսում եր քրոջ մտերմությամբ։ Մեր թերթի թղթակիցն այսպիսի մի խոսակցություն արձանագրեց։

Յես—Ասում ես առաջ լավ եյիք ապրում ելի... Առինչեցի Մարգարիտը, — (զարմանքի և մի փոքր ել սարսափի արտահայտությունը գեմքին)։ Քա վայ, ոև կապեմ յես, ով ասաց լավ ենք ապրել։ Մի քիչ հող ունեյի, կիսրար կտայի հարուստնե-

ըին։ Սերմը կվերցնելին, վար ու ցանքի հախը կվերցնելին, տակին կմնար մի քանի կոտ խըրս-
փուկ, են ել երկու իրենք կվերցնելին, մեկ ինձ
կտային։ Ոհաննեսս, խեղճ բալա ջան (և նրա աչ-
քերը լցվեցին), ծակ չարուխներով մշակ եր։
Անատոլս ու Սիրուշ ել գարուն վոր կգեր՝ կա-
նաչով կապրեյին։ Սև եղնի նիկով թախտը, ինչ
ու եղավ, նրա որով յես յերբ եմ աշխարքից բան
հասկացել։

ՅԵՍ—Յերեվի հիմա Ոհաննեսդ ահագին աղա-
մարդ ե և լավ ել ապրում ե։

ՆԱ—Ապա՝, նա յել չապրի, ով ապրի։ Սև
որով մեծացրի։ Հիմի կոլխոզում ենալես կապրի
վոր...։

ՅԵՍ—Ամուսնացավ։

ՆԱ—Հա՝ ... յերկու նշխուն աղջիկ ել ունի...։

ՅԵՍ—Աղջիկներդ։ Յերեփ մարդու գնացին,
քեզ մոռացան։

ՆԱ—Հա՝, բալա ջան, Անատոլիկս մարդու
գնաց։ Համա չմոռացավ, եղտեղ դու ծուռն ասա-
ցիր (և ժամաց)։

ՅԵՍ—Ե՛, փեսադ վոնց տղա յե, հավանում
ես, կոլխոզնիկ ե։

ՆԱ— (պառավի դեմքը և աչքերը լցվեցին
բարության արտահայտությամբ)՝ Իմ հաշվով մի
հատ տղա յե։ Ինչ ես հարցնում։ հա, անհատ ա-

թե կոլխոզ։ Սև կապեմ, ետենց հարց կտան։ Իս-
կի կլինի, վոր կոլխոզն անհատին առնի։

ՅԵՍ—Ինչի՞ չի լինի։

ՆԱ—Ընդուր վոր կնիկն աշխոր կքցի, մարդը
հեչ մի զադ ել չի քցի։

Ծիծաղեցինք։

ՅԵՍ—Հենց այդ։

ՆԱ—Զե, մեկ ել—մեկի ձամբեն գբա Յլա-
զագ կտանի, են մեկելինը՝ գբա Բաշգյառնի։

ՅԵՍ—Ե՛, Սիրուշն ի՞նչ դուքս յեկավ։

ՆԱ—Կոմսոմոլ դուքս յեկավ, լավ աղջիկ
դուքս յեկավ, հիմի յել կծառայի Արգաքյանդում։
Իմ խեղճ վորբեր, ինչ որ են տեսել, թող ապրեն
ե, թող ապրեն, նոր են սկսել ապրել։

Հարց ու փորձից պարզվեց, վոր կոլխոզունի
Մարգարիտը, նախկին լվացքարար այդ կինը,
այժմ կոլխոզում իսկապես վոր լավ ե ապրում։
«Եփկալի ժամանակ» տուն ել չի ունեցել։ Վերջին
տարիներս կառուցել ե գեղեցիկ մի «ոթախ»։
Ապրում ե մաքուր։ Անցյալ տարի, չնայած կոլ-
խոզի անհաջող բերքին, միայն իր աշխորերի
գիմաց ստացել ե 14 փութ ցորեն, 3 և կես փութ
գարի, կարտոֆիլ, կաղամբ և այլն։ Այս տարի նա
ողակավար ե և չնայած իր 60-ամյա տարիքին,
հարվածային ե։ Կոլխոզի վարչությունը և փոխ-
ոգնության գրամարկուր, գնահատելով նրա աշխա-

նրանքը, նրան ուղարկել են Ղարաբիլիսայի հանդսայան տունը:

Նրա ընկերը, հարևան Ավան գյուղացի Արփիկը, սևաչյա, կենդանի և տպավորիչ զեմքով (վոր արևի տակ ըրմնղի փայլ եւ ստացել) մի աղջիկ եւ Հազիվ 27 տարեկան լինի: Ծխախոտագործական բրիգադի ողակավարներից եւ:

—Հերու, —պատմում եւ նա, —17 տնից մի շրւտ կոլխոզ եյինք: Ես մեր Մարգարիտ տատի կոլխոզից սերմ պարտք արինք—ցանեցինք: Սրտով գործ արինք ու լավ ել բերք ստացանք: Համ պարտքը տվինք, համ պետության խարջը, համ ել կարգին սկսեցինք ապրել:

Նա աղքատի աղջիկ եւ յեղել—հացի կարուա աղքատի աղջիկ: Հեղափոխությունը նրան գտավ վոտարորիկ ու ցնցոտապատ: Ամուսնության առաջին տարիներին ել վատ եր ապրում: Ամուսինը՝ Գեվորգը, կոլխոզի լավագույն ծխախոտագործներից եւ: Իսկ ինքը՝ ծխախոտագործ-ողակավար:

Անցյալ տարի առաջին անգամ նրանք կուշտ ապրեցին և կուշտ ել պահեցին իրենց միակ յերեխային, իր ասելով ամենալավ յերեխային զյուղում—փոքրիկ Անդիկին: Նրանք ստացան.

28 փութ ցորեն,

7 փութ գարի,

14 փութ լոքի,

10 փութ կաղամբ,

500 խուրձ յոնջա:

Այդ այն ժամանակ, յերբ կոլխոզն աղքատ եր ու նոր, յերբ նրանում «17 շուտ տնտեսություն եր»:

Այժմ նա թոփչք եւ արել: 35 տնտեսություն մի անգամից կոլխոզ մտան:

Նա այժմ սեփական սերմ, սեփական ինվենտար ունի և գիտակցում եւ սեփական ուժը: Դեռ ևս փոքրիկ այդ տնտեսությունն այս տարի միանգամից 150 հեկտար ցորեն ու գարի ցանեց և տնկեց 13 հեկտար ընտիր ծխախոտ:

Հարստանալու՝ մարդավայել ապրելու, աղքատության մեջքն ընդմիջա կոտրելու հեռանկարը զեպի գործ մղեց բոլորին և Գեվորգն ու Արփիկը՝ ծխախոտագործ ամուսինները—նուրբ տունները շարեցին մեծ հոգատարությամբ:

Մայրը, կոլտնտեսուհի Արփիենիկը, յերջանկության արցունքն աչքերին մայրական խանդաղատանքով ասաց:

—Բնկեր, զրի, վոր Սեղիկս ել եւ թութուն շարում, որեկան 5 շար:

—Չդրեմ, վոր շատ ես կարոտել Սեղիկին:

Նա ուղղակի արտասվեց:

—Գրի, հոգուտ զուրբան, զրի թող գեղում

կարդան, թող Գեվորգն ել, Սեղիկս ել իմանան,
վոր իրենց շատ եմ կարուտել: Այս, մոր Ջիզյա-
քըն ուրիշ ե, դուք տղամարդիկդ եդ չեք հասկա-
նա:

Ծիծաղեցինք:

— Շատ սիրող մայրը մենակ կվայելի ես
գեղեցկությունը, — դիտմամբ բորբոքեցի յետ:
Նա շանթահարվեց:

— Ինչ վոր կուտեմ, հավատա, վոր մեջքովս
կեթա: Ամեն թիքա կարագ վերցնելիս կմտածեմ
«ախ, ուր ես Սեղիկ ջան, մի դուռում ել քեզ
տամ»:

— Հա, հա, հա, սև կապեմ յետ, ել մի ասի,
— մյուս կողմից թոնթորաց Մարգարիտ տատն
ու գողնոցով սրբեց աչքերը: Յերեկ թուները
միտքն ընկան:

Յես նրանց մխիթարեցի:

— Լավ վոր աշխատեք, յերեխաներով կդաք
ամառանոց:

— Զաթի պիտի գամ, եդ ել խո՞սք ե: Ասին
անձրե ե, ցեխ ե, դրա համար չքերի, թե չե՞
փառք կոլխոզին, ինչս ե պակաս, վոր Սեղիկս
համար բան խնայեմ: — Յեկող տարի անպայման
կբերեմ, թող լաղաթ առնի բալես ես սիրուն
ամարաթից:

Ապա ավելացրեց՝

— Ես տարի, վոր լավ բերք ստացանք, լավ
կհարուստանանք: 150 հեկտարն եղ ուր ա...: Ու
բոլորս ել կարգին կապրենք, կդնանք աշխարհ
կտեսնենք:

Ցեվ ապա կարծես ինքն իրեն շշնջաց, — ա-
ռենք հիմի յել լավ ենք, խեղճ իմ մեր, մենք
եսպես ապրուստ յերբ ենք սեսել վոր...:

3. Կյանքը շատրվանի յեզերքին

Կոլխոզիկ տատը, վոր սովոր եր թոնքին
ու ծիսին, միանդամից իրեն համար անծանոթ մի-
ջավայր ընկափ: Նքեղ ապարանք, վճիռ, արծա-
թափայլ ափազան, մաքուր սպիտակեղեն և փար-
թամ ծառուղիներ: Նրա աչքին ամեն ինչ ար-
տակարգ կուլտուրական ե յերեւմ, այն աստի-
ճան, վոր առաջի սրերը շփոթվում եր անգամ
ծառուղիներով ճեմելիս:

— Քա սև կապեմ, եստեղ ել վո՞տք կկոխեն:

Ավելի անսովոր եր այգտեղի վարք ու բարքը:

— Մին ել տեսար, ծլընդ-ծլընդ, ծլընդ,
զանգը կտան: Ուզես-չուզես պիտի ուտես: Սև
կապեմ ձեր գլխուն, յես եմ; հիմի իշտահ չունեմ,
զուռ՞կ ա...:

Բժշկուհին պատմում ե, վոր առաջին որը
հազիվ հն նրան համոզեր, վոր չափսի ու կշռվու-

Այդ գեղքն առինջեցի Մարգարիտն այսպես եւ պատմում:

— Ախաղերս, վոր դու յես, գեղից սկսեմ: Նախագահն ասավ թե՝ «Մարքրիտ, յեկ սլախ եւ թառ Ղարաբիլսա, հանգստի տուն»:

Ասի քա, ու կապեք, յես ի՞նչ եմ արել, վոր հանգստարան կղըկեք: Ասին՝ չե, շատ աշխատեցիր, գնա չաղացի: Ասի՝ եթա մ, բա ո՞վ աշխոր գցի ինձ համար: Ասին՝ գնա, մի բան կամնենք: Ասին, մի կտոր թուղթ տվին, հեան ել 25 մանեթ ծախս: Նստեցի պոյեզդ, գը ո, գու ո, մինքնեցինք, մին վեր կացանք, մեկ ել կանգուխտուրը բղավեց—Ղարաբիլի ո, Ղարաբիլի ո...: Եջանք պոյեզդից, տարան մի ամարաթ, մի ամարաթ, վոր Շահ-Խսմայիլի ամարաթից ել մի բան ավել:

Ասում եմ փառքու շատ լինի աստված (ասենք հիմի աստված ել չի մնացել), ես ո՞ւր ընկաւ Ասում եմ եստեղ ըսկի ինձ լիացք անելու համար ել չեյին ընդունի: Հիմի վոսներս կմեկնեմ շարմադ տեղաշորին, վոնց վոր մեր տանը:

Հա, բալա ջան, տարան, հարց տվին—հարց առան, թղթի վրա գրեցին ամեն հանգամանք, Մեկ ել թե՝ գեյրեղ հանիր: Ասի, ու կապեք, անամո՞թ եմ, ինչ ա, վոր հանեմ: (Այդ ժամանակ յես և Արքիլը սրտալի ծիծաղեցինք): Զուին, համոզին — հանեցին ու ասին գեհ կանգնի պա-

տի մոտ: Զըլիկ, մի փետով զարդեցին պատին ու ասին՝ հարիր վաթառն յերկու սանտիմ: Մեկ ել քոշերս հանել ավին, կանգնեցրին կշեռքին: Թա ու կապեմ, ասի, ես ապրանք կը աշին: Կավա մեր գեղից մարդ չկար, թե չե գետինը կմըտնեյի: Զըլիկացրին՝ հիսուն ութ կիլո: Ասին՝ չորս կիլո յել սիտի չաղանաց, վոր գա թմմի:

Ասի՝ բաշ ուստա, դուք յեմս*) տեղը պահեցիք, թմմեն իմ պարագը լինի: Համա, Ոհանեսիս արել, ենպես կխոսեն մարդու հետ, վոնց վոր հարազատ մոր հետ:

Վերջը զլուխու ինչ ցավացնեմ, տարան բաղնիք, յեղանք թամուղ, սկտա կ՝ վոնց բամբակ...:

— Են մեծ ակուշկեքը կտեսնե՞ս:

— Հա, պայծառ ոենյակ եւ:

— Են իմ ոենյակն ա: Լուս, թա՞ո-թամբ՞զ: Կողինք տվին—մի պրոստին տակը, մինը փեն, թամուղ սրբիչ, թամուղ աղյալ, կասես մարդի ձեռ չի դիպել:

Առավոտը կգա ճաշ կդառնա, նոր սրանք զանգը կտան: Ո՞վ զանգի ոեխին թամաշա կանի: Հա թող տան: Յես վոնց սովորել եմ, ենպես ել անում եմ: Դե, բալա ջան, գեղում աքլորա-

*) Յեմ—ուտելիք:

բազմությունը վեստիլի
և ող յրաւելք պատկան չունի յրաւելքին և ուժ
ավագ ովք տղթ մաի ուժ յրաւելք ունի ուժ —
մաի ուժ չունի վազ լզմ շան զ —

*** վազ
ավելի նդղթ վիսմ ու վժագչ մշտած մաս և սիսո
վազաւած և սիսո վօման ուժ զ տիկ ու սաւոք
ու ուժ և վազը մաի նախա մաշտած և նդմն ուժ
«լուսացը» լզ վազաւազ մվազ ուժ մվազ ուժ յրաւասե
յրաւանմաց ուժ ֆայ-ֆայ լզ ուղղթ միզման վավել
գթ ուժ յրաւասե մաի ուղղ ուշաւաեր նվազը

ուղղազուի վնաց լզ կզր
«ժողովազմին» — ժողովամեն լզ նզ ժողովազմի գփակ լզ
ուղմի ու ժողովի ուղ ժողովի — գթ ուտակ նդտե լզ
կզր քառաուզ քառաուզ ուղումակ նվազ ժողովազմի նվառու
լզի մորուց եղը մազեզաւ նորմուն ուղ ու ժողովի վազի ուղու
ուսան ուղեւ վուսաւաշ ավտակ նդտե լզ կզը

վիսքի զ իս վրովի վիսքե
վերսի իլ զ ուտքի նվուու մ վմաց — ովուու ու սո
շթիկ (*** ովուու յումե վուտթ հիվմազ վիստ) նում
ատի լզ ագչ վիտթ ատի նգտ ուտթնով մվարի աչ մ
տթ յրաւասե ուժ ուղեւ վրաւասու *** իտթն —

:(ովնմասիսի վեզփու իստ
-արտեւան) ուժ յրաւասու մնատ գ նուսին —

նվիտա վազագման ու յրաւասի
սմֆ լզ ովյուտթ վմու ուղլունով յրաւաս ու ուտթն
միսիտց ատու տուլուն վր ուուու վր ուումուու

այտմանուց ժողովազմի պատի մաի նեղտե — Գունդու
-գի մուտա տվմանմագ նդկաւուսմուն — պի —
ժողովազմագ ժաքուի

այտմանուց մտեաց ու մզի նմզագչ միջնօ զգն
միջնօ մուցն ասկմագ մուցը յրաւասուրմուր
լզ ուժ զ վազ յրաւասուի ուժ մ ուժ ատի ատի —
լզ ուժ —

յրաւա
-եղուկի իսմազմուն ու (զդուան վնափ վրտատ տրուց)
ուժ յրաւանմաի և մրտթ-ստթ մնագ նվեղուց

ովիտթ ովիմզուզենեզր
«ովիմզելու մազաւաւեն ուժ մազմա ուժ յրաւասուրմուր
-տ ուժ մաի իտեզը նուսի ուժ գթ յրաւասու յրգը վլզ
յրաւասու յրգը լզ ուտթ յրաւասու յրգ լզ կզր չուկ ու
չուկ ու յրաւասումուն ովիտթ յրգ ուտթ կտպէլլ
յրաւասու ուժ ժավը ու նու ունմու մթտրումու
վմզիկվետթ ուժ մեսմինի վմզ ուժ մեսնովու վմզս
-տթ ուժ միսչ տիտախտագ ովիտթ ունան յրաւասի
յրգ մզի ուսփ ու ուսա նդչնուկ ուղմազմ ժողովի մա
-սլմու նվազ ու ուղման ուղուտե ուժ զ զ ուտթ վա
-վիտթ մեղուտե ու նու գթ յրգինցուտթ կտտ վեզտ վա
-վիտթ ու նու ուժ վլզ վլզ օւազ լզ ուժ յրգն յրգն
ու ուժ ու ուժ մեղումմ յրգինցուտթ ժող յրաւաս ուժ
-ուժ յրգի յրգինցուտթ ժող ուժ ուղման ուղուտե ուժ յրգն

Հա, — բալա ջան — ասի, վոր քունս չի տառում: Սուսափուս ծլկվում եմ, դեսի զրադին նըստում: Դոխտուրը մի որ նկատողություն արավէ Ասի՝ դոխտուր, սպանես չեմ քնի: Ճարը կտրեց ծիծաղեց գնաց:

Մեոյան ել վոր պրծանք, ելի զանգը կտան — բուրկի, պերոգ, չայ, հաց իրար կխառնենք, կեթան իրան տեղը կբարիշեն:

4. Նա գոհ ե, լիովին գոհ

Կոլխոզնիկ տատը գոհ ե, շատ ե գոհ հաճագոտի տնից: Թեև յես անձնապես շատ ել գոհ չեմ հանգստի տան վարչությունից, այն բանի համար, վոր պարտեզն ու ծառուղիները դեռևս գեղարվեստորեն չեն ձեավորված, դեռ պահանջված մաքրությունը չկա, թքամանները պակասում են, չկա ծովագինյա ամառանոցներին հատուկ շատրվաններ, շատ պրիմատիվ ե կուլտուրական սպասարկումը և վերջապես ընթրիք գրեթե չունեն (ժամը 5-ից հետո վոչինչ չի տըրպում). այնուամենայնիվ առինջեցի Մարգարիտն այնքան գոհ ե յեղածով, վոր ինձ չհաջողվեց նրա բերանից վորեե գանգատի նման մի բան սել հանգստի տան վորեե յերեւոյթի մասին:

— Իսկ ինչ ես պահանջում, ինչ կուզեյիր, վոր լիներ այս բոլորից բացի:

— Քա ու կապեմ, սրանից ավել ել բան կա աշխարքի տակին — զարմացած պատասխանեց նա:

Նա գոհ ե, շատ գոհ: Նորությունը միայն լավ կերակրվելը և մաքուր, կուլտուրական ապրելը չե: Ամեն ինչ նրա համար նորություն ե — ընթերցումը, թատրոնը, ուղիոն, ինքնազործունեյության յերեկոները և սանավանդ կինոն:

— Են որը մի կինո տեսանք, մի ալամաթինո տեսանք, վոր ժողովուրթը լացից ջուր կտրվեց:

— Ի՞նչ, յերեկ «Գիքորն» ե յեղել:

— Հա, հա, տղի անունը Գրիգոր եր: Վոնց վոր իմ Ոհանեսը փոքր ժամանակ: Են հին-հինորերս յեկան աչքիս առաջ: Կինոյում վոր խաղելինն սկսեց թակել Գիքորին, սիրաս մղկտաց, վոնց վոր Ոհանեսիս թակելիս լիներ: Վերջը վոր հերը շորերը կոնստակին մեջի միջով գալիս եր, վոր կանգնեց են աղբյուրի մոտ, վորտեղից Գիքորը ջուր եր խմել, սիրաս կտոր-կտոր յեղավէ Միտո յեկան իմ որը, իմ Ոհանեսի խեղճ որը, հիշեցի իմ յեթիմ յերեխաններին....

— Հենց եսպես եր վոր կար, իսկի մի մադսիալ չեն նշանց տալիս:

— Վո՞նց փոխվեց, աշխարքը վո՞նց փոխվեց, վո՞նց սկսեցինք ապրել... ում մտքով կանցներ թե յես առինջեցի բատրակ Ոհանեսի մայրս, Դալի-Թափա-6.

լվացքարար Մարգարիտս, մեր հարևան ավանեցի ջլթոտ Արփիկի հետ պետք եւ սիրտ փառավորեցնենք այիրովների ամառանոցում,—վերջացրեց կոլխոզնիկ տատը խորը բավականությամբ:

Յերբ խմբագրության լուսանկարիչն ապարատը պատրաստեց նրանց նկարելու՝ կոլխոզնիկ տատը յերեսը ծածկեց:

— Քա սե կապեմ, յես մայմո՞ւն եմ, վորինձ նկարում եք: Խակ յերբ հասկացրի, վոր թերթում տպելու յենք, նա սարսափեց:

— Խաղք ու խայտառակ կիխնենք, յես ովկեմ վոր, յես հո Լոռիս-Մելիքով յերանալը չեմ, վորինձ գաղեթ զցեք:

Յեկ ապա հանդարտվեց ու կարծես ինքնիրեն համար ասաց.

— Ասենք յերանալ չենք, բա ինչ ենք... և բերկրանքի ու տարակուսանքի արտահայտությունը գեմքին նայեց գոթական վոճի շենքի շքեղ կամարներին:

— Պարզ տպեցեք, Սեղիկս տեսնի, մեռնեմ նրա աչքերին—ձայն տվեց ավանցի Արփիկը, յերբ մենք հեռանում եյինք:

Այդ ըոպեյին նրա հոգին Ավանի դաշտերումն եր, ուր զրոհում են կոլտնտեսական բրիգադները, ուր փթթում եւ «Տրապիզոն» ծխա-

խոտը և ուր փոքրիկ Սեղիկը կոլխոզնիկ հոր հետ իր քնքուշ մասներով հարդարում եւ կանոչ մարգերը...»

Դարաքիլիսա, 1933 թ.

մարտի 31



Վ. Բ Ի Պ Ա Կ

Դրբույթի Յ-րդ հջում ընկ, Ստալինի ճառից բերված ցիս
առարկում սպրուկ և հետեւալ սխալը, աղաղրված և «Յես խոսում
եմ վոչ միայն զարգացման ու մեքենատրակտորային բազա ունե-
ցող կոլտնտեսականների մասին», պետք ելինի՝ «Յես խոսում եմ
վոչ միայն զարգացած ու մեքենատրակտորային բազա ունեցող
կոլտնտեսությունների մասին»;

58

ԳԻՒԾ 1 Ր.



Վ. ԱՆԱԿԻ

Դ Ա Լ Ի - Տ Ա Պ Ա

СЕЛЬХОЗГИЗ

1934

ԵԿՐԵՎԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0327826

19.625